ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» 07 2026 թ. № 78-Ա

ԱՐՄՍՏԱՏՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (PEER REVIEW) ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդլայնման և ԵՀՔ Արևելյան երկրներում Գործընկերների կողմից փորձագիտական գնահատումների (Peer Review) 2025-2027թթ. փուլի համատեքստում 2025թ. հունիսի 2-6-ը Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) կողմից իրականացված Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի Peer Review-ի (հաշվետվությունը հրապարակված է Արմստատի (https://www.armstat.am/file/doc/99566803.pdf) և Եվրոստատի (https://ec.europa.eu/eurostat/documents/12944781/18537264/armenia-peer-review-report-2025.pdf/dbce0ec2-c926-5df7-0a0e-3f4fe4c853a4?t=1773045979837) կայքերում) արդյունքներով ներկայացված առաջարկությունների և բարելավման գործողությունների իրականացման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ներքոնշյալ պաշտոնատար անձանց (պատասխանատուներին)՝ սահմանված ժամկետներում իրականացնել իրենց ոլորտին վերաբերող բարելավման գործողությունները (համաձայն կից հավելվածի):

Գագիկ Անանյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ - Արմստատի նախագահի տեղակալ
Անահիտ Սաֆյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ - Արմստատի նախագահի տեղակալ

Վարդան Արևշատյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Աիդա Մարտիրոսյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Լիլիթ Պետրոսյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Նելլի Բաղդասարյան	ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Արաիկ Հայրապետյան	Արմստատի գլխավոր քարտուղար
Կարինե Կույումջյան	Արմստատի նախագահի խորհրդական
Մարիամ Երիցյան	Ավագ տնտեսագետ
Անահիտ Մանանդյան	Ներքին աուդիտի վարչության պետ
Արմենուհի Առուշանյան	Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ
Գայանե Հարությունյան	Անձնակազմի կառավարման բաժնի պետ
Սարգիս Լալայան	Իրավաբանական բաժնի պետ
Մարիամ Դալլաքյան	Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ
Հայկուշ Տիտիզյան	Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ
Քրիստինե Պողոսյան	Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ
Սեդա Մովսիսյան	Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ
Անահիտ Հարությունյան	Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ
Աննա Հակոբյան	Բնապահպանության վիճակագրության բաժնի պետ
Արմինե Ավետիսյան	Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ
Ալինա Գրիգորյան	Սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ

Ռուզաննա Շաբոյան	Որակի կառավարման բաժնի պետ
Նարինե Մուշեղյան	Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ
Զարուհի Ավետիսյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Արսեն Ավագյան	Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ
Լուսինե Մարկոսյան	Տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ
Սուսաննա Կարապետյան	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

2.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ - Արմստատի նախագահի տեղակալ Ա. Սաֆյանին (համաձայնությամբ):

3.Պատասխանատուներին՝

սահմանված ժամկետի ավարտին բարելավման գործողությունների իրականացման արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել ՀՀ Վիճակագրության պետական խորհրդին:

ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

21 հուլիսի 2026 թվական

ք. Երևան

ARMSTAT

Հավելված
ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի
2026թ. հուլիսի 21-ի թիվ 78- Ա հրամանի

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ՝ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ

Գործընկերների առաջարկությունները և բարելավման գործողություններն՝ առաջարկություններին ի պատասխան
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ (ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1 - 6)
Առաջարկություն 1 1. Արմստատին և համապատասխան պետական մարմիններին խրախուսվում է բարձրացնել Արմստատի նախագահի ընտրության հետ կապված գործընթացների թափանցիկությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով գործընթացի մեկնարկին: (Համապատասխանության հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք 1.8)
Ներկա իրավիճակը. Պրոֆեսիոնալ անկախության կարևորությունը հստակորեն հասկացված է և ներդրված է Հայաստանի վիճակագրական համակարգում, և որևէ մտահոգություն չի բարձրացվել գնահատող թիմի հետ այս սկզբունքի իրականացման վերաբերյալ: Սկզբունքի համար ամուր իրավական հիմք է ամրագրված «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 6-րդ հոդվածում, որը պահանջում է, որ պաշտոնական վիճակագրությունը մշակվի, արտադրվի և տարածվի «լիակատար պրոֆեսիոնալ անկախությամբ»: Արմստատը պարտավոր է ապահովել անկախության սկզբունքի հետ համապատասխանությունը: Արմստատի նախագահը, ինչպես նաև Վիճակագրության պետական խորհրդի մյուս անդամները, նշանակվում են Հայաստանի կառավարության կողմից՝ վարչապետի առաջարկությամբ՝ վեց տարի ժամկետով: Ընտրվելու չափանիշները, ինչպես նաև ազատման հիմքերը, հստակ սահմանված են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում: Նույն անձը չի կարող նշանակվել Արմստատի նախագահ ավելի քան երկու անընդմեջ ժամկետով: Նախագահը չի կարող ունենալ կուսակցական պատկանելություն, այլ պետական պաշտոններ կամ վճարովի աշխատանք՝ գիտական, կրթական կամ ստեղծագործական ոլորտներից դուրս: Արմստատի նախագահն ունի ոչ քաղաքական նախարարական դաս, գտնվում է նույն մակարդակի վրա, ինչ ՀՀ կառավարության գերատեսչությունների ղեկավարները, մասնակցում է կառավարական մարմինների նիստերին և ունի բարձր մակարդակի հասանելիություն քաղաքական մարմիններին և վարչական հանրային մարմիններին: Այնուամենայնիվ, գնահատող թիմը կարծում է, որ նշանակման ընթացակարգերի թափանցիկության պակասը, մասնավորապես՝ ներգրավման գործընթացի սկզբում, և Արմստատի նախագահի թափուր պաշտոնի մասին հայտարարության պակասը, ՀՀ վիճակագրական համակարգի թույլ կողմ է, որը ապագայում կարող է

բացասաբար անդրադառնալ Արմստատի պրոֆեսիոնալ անկախության ընկալման վրա: Արմստատին և համապատասխան պետական մարմիններին խրախուսվում է լուծել խնդիրը, օրինակ՝ «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում կամ այլ կիրառելի իրավական ակտում փոփոխություններ կատարելով կամ պաշտոնական ընթացակարգ սահմանելով:
Բարելավման ենթագործողություն 1.1. Պաշտոնական վիճակագրության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի մշակում՝ Արմստատի նախագահի ընտրության և նշանակման ներկայում գործող ընթացակարգը փոփոխելու նպատակով և Կառավարություն ներկայացում:
Վերջնաժամկետ. 2028թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 1.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 1.2. Կառավարության կողմից օրենքի Նախագծի հավանության արժանացում և Ազգային ժողով ներկայացում:
Վերջնաժամկետ. 2028թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 1.2 համար. Կառավարություն
Բարելավման ենթագործողություն 1.3. Օրենքի ընդունում
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 1.3 համար. Ազգային ժողով
Արաիկ Հայրապետյան Սարգիս Լալայան
Առաջարկություն 2 2. Արմստատը և համապատասխան պետական մարմինները պետք է փոփոխություններ կատարեն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում՝ մասնավոր տվյալների հասանելիությանը նպաստելու համար: (Համապատասխանության հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 2.4)
Ներկա իրավիճակը. Մասնավոր պահվող տվյալները կարող են բարելավել պաշտոնական վիճակագրության արտադրությունը և լրացնել այն: Սուպերմարկետներից ստացված սկաներային տվյալները, բանկերից ստացված բանկային գործարքների տվյալները կամ հեռահաղորդակցության մատակարարներից ստացված տեղեկատվությունն արդեն իսկ հաջողությամբ օգտագործվում են տարբեր ազգային վիճակագրական ինստիտուտների կողմից: Այնուամենայնիվ, կան մի շարք խոչընդոտներ նման տվյալների հասանելիության և օգտագործման պարագայում: Հիմնավորված իրավական շրջանակի առկայությունն էական պահանջ է մասնավոր պահվող տվյալների բացահայտմանը նպաստելու համար

(Եվրոպական վիճակագրության վերաբերյալ վերանայված N 223/2009 կանոնակարգը (ԵՀ) նշում է, որ այն պետք է հեշտացնի հասանելիությունը՝ միաժամանակ ապահովելով տեխնիկական և ընթացակարգային պաշտպանություններ և երաշխիքներ, ներառյալ անվտանգությունը, գաղտնիության բարձր մակարդակը և անձնական կյանքի նկատմամբ հարգանքը): «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքը ներկայումս չի նպաստում Արմստատի կամ Հայաստանում պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համար մասնավոր տվյալների աղբյուրներին հասանելիությանը: Եվրոպական վիճակագրության վերաբերյալ վերանայված N 223/2009 կանոնակարգը (ԵՀ), ինչպես նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» ընդհանուր օրենքում (առաջիկա) կատարված փոփոխությունները և վիճակագրական օրենսդրության արդիականացման վերաբերյալ դրա ուղեցույցը կարող են ուղղորդել Հայաստանի ազգային օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունները:
Բարելավման ենթագործողություն 2.1. Պաշտոնական վիճակագրության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի մշակում՝ մասնավոր հատվածի կողմից տնօրինվող տվյալների հասանելիության վերաբերյալ և դրա ներկայացում Կառավարություն:
Վերջնաժամկետ. 2028թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 2.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 2.2. Կառավարության կողմից օրենքի նախագծի հավանության արժանացում և Ազգային ժողով ներկայացում:
Վերջնաժամկետ. 2028թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 2.2 համար. Կառավարություն
Բարելավման ենթագործողություն 2.3. Օրենքի ընդունում
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 2.3 համար. Ազգային ժողով
Գագիկ Անանյան Վարդան Արևշատյան Աիդա Մարտիրոսյան Սարգիս Լալայան
Առաջարկություն 3 3. Համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն, որ Արմստատն ունենա բավարար ռեսուրսներ՝ նոր վիճակագրության ի հայտ եկող կարիքները բավարարելու, նորարարական նախագծերին աջակցելու և տեխնոլոգիական

զարգացումները հնարավոր դարձնելու համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 3.1)
Ներկա իրավիճակը. Չնայած կառավարությունը ճանաչել է պաշտոնական վիճակագրության արտադրության համար ռեսուրսների ապահովման կարևորությունը, ինչի մասին վկայում են Արմստատին բյուջետային հատկացումների կայուն աճը, ինչպես նաև 2022 թվականի մարդահամարի և 2024 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման համար տրամադրված բավարար ռեսուրսները, դեռևս անհրաժեշտ է հատկացնել լրացուցիչ ռեսուրսներ՝ արագ փոփոխվող միջավայրում նոր վիճակագրության արտադրությունը և Արմստատի մանդատի կատարումն ապահովելու համար: Որոշում կայացնողներին հուսալի տվյալներ և շահառուների լայն շրջանակին տեղեկատվություն տրամադրելը պահանջում է համապատասխան տեխնոլոգիաներ, բարձր պրոֆեսիոնալ կարողություններ, նորարարական պրակտիկայի և արդյունավետ հաղորդակցման ու տարածման գործիքներ: Արմստատը պետք է ավելի լավ զինված լինի այս մարտահրավերներին արձագանքելու համար: Եթե Արմստատը ցանկանում է շարունակել արդիականացումը և իրացնել իր ներուժը՝ որպես նորարարական վիճակագրություն արտադրող, ապա անհրաժեշտ է բյուջետային ֆինանսավորման համակարգված աճ՝ վիճակագրական ենթակառուցվածքներում անհրաժեշտ ներդրումներն իրականացնելու համար:
Բարելավման ենթագործողություն 3.1. Յուրաքանչյուր հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում լրացուցիչ նախաձեռնությունների և ծախսային առաջարկների ներկայացում Ֆինանսների նախարարություն՝ հաշվի առնելով վիճակագրական տեղեկություններ օգտագործողների և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պահանջարկը:
Վերջնաժամկետ. Շարունակական՝ սկսած 2026թ. I եռամսյակից
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 3.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 3.2. Ֆինանսների նախարարության և Կառավարության հետ բանակցությունների վարում և համաձայնության ձեռքբերում:
Վերջնաժամկետ. Շարունակական՝ սկսած 2026թ. II եռամսյակից
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 3.2 համար. Ֆինանսների նախարարություն և Կառավարություն
Բարելավման ենթագործողություն 3.3. Պետական բյուջեի մասին օրենքի ընդունում:
Վերջնաժամկետ. Շարունակական՝ սկսած 2026թ. IV եռամսյակից

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 3.3 համար. Ազգային ժողով
Արահիկ Հայրապետյան Անահիտ Մանանդյան Սուսաննա Կարապետյան
Առաջարկություն 4 4. Արմստատը պետք է մտածի գլխավոր գրասենյակի և մարզային գրասենյակների միջև աշխատանքը վերակազմակերպելու մասին՝ արդյունավետությունը և ծախսարդյունավետությունը բարելավելու համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 10.2)
Ներկա իրավիճակը. Համեմատաբար փոքր երկրի համար Արմստատի աշխատակիցների համեմատաբար մեծ մասն աշխատում է ապակենտրոնացված ստորաբաժանումներում: Բացի Երևանում գտնվող կենտրոնական գրասենյակից, կան 11 ռեգիոնալ (մարզային) գրասենյակներ, որոնք հետագայում բաժանված են որոշակի տարածքային բաժինների: Արմստատի ընդհանուր 342 մշտական աշխատակիցներից 160-ը (46.7%) աշխատում են մարզային գրասենյակներում: Արմստատը նաև վարձում է լրացուցիչ ժամանակավոր աշխատակիցներ՝ մարզերում տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների հավաքագրմանն աջակցելու համար: Այս կազմակերպական կառուցվածքը ժառանգական գործելակերպի արդյունք է, որտեղ մարզային գրասենյակները հիմնականում պատասխանատու էին տվյալների հավաքագրման գործունեության (տնտեսավարող սուբյեկտների հարցումներ, տնային տնտեսությունների հետազոտություններ և գնահավաք) և տեղական տվյալների տարածման համար: Սակայն այս կառույցներն աստիճանաբար հնանում են, և տվյալների տարածման առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման, վարչական տվյալների օգտագործման աճի, համակարգչային հեռախոսներով իրականացվող հարցազրույցների ավելի լայն կիրառման և վեբ-հարցումների ներդրման շնորհիվ վիճակագրական գրասենյակներն այլևս կարիք չունեն բոլոր մարզերում խիստ ներկայության: Չնայած մարզային գրասենյակները շարունակում են ներգրավված լինել տվյալների հավաքագրման մեջ, վիճակագրական գործընթացների շարունակական արդիականացումը, հավանաբար, ապագայում կնվազեցնի նրանց աշխատանքային ծանրաբեռնվածության չափը: Հետևաբար, մարզային գրասենյակների և բաժինների աշխատակիցների մի մասի ինտեգրումը կենտրոնական գրասենյակ կարող է հնարավորություն տալ՝ ավելացնելու որակավորված անձնակազմի բացարձակ թիվն Արմստատի գլխավոր գրասենյակում և հնարավորություն տալ ավելի լավ իրականացնել ռազմավարական առաջնահերթություններն՝ առանց բյուջեի վրա ազդելու: Մարզային

գրասենյակների մասնագիտացումը նույնպես կարող է դիտարկվել որպես պոտենցիալ լուծում: Արդյունավետ աշխատանքային մեթոդների մշակման ավելի լայն համատեքստում կա նաև հնարավորություն ստեղծել հեռավար աշխատակիցների ցանց, որոնք ներգրավված են հարցազրույցներում կամ այլ առաջադրանքներում, որոնք կարող են իրականացվել տնից: Արմստատը պետք է ներքին կերպով մտածի օպտիմալ լուծման մասին և մշակի միջնաժամկետ ծրագիր՝ գլխավոր գրասենյակի և տարածաշրջանային գրասենյակների միջև աշխատանքի ավելի լավ բաժանման համար:
Բարելավման ենթագործողություն 4.1. Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների (կենտրոնական գրասենյակ և մարզային վարչություններ) գործառույթների և հաստիքների թվաքանակի գնահատում և վերանայում:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 4.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 4.2. Արմստատի կանոնադրության և կառուցվածքի փոփոխության մասին Վարչապետի որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ:
Վերջնաժամկետ. 2029թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 4.2 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 4.3. Արմստատի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին Վարչապետի որոշման ընդունում:
Վերջնաժամկետ. 2029թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 4.3 համար. Վարչապետի աշխատակազմ
Բարելավման ենթագործողություն 4.4. Արմստատի ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների իրականացում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծի մշակում, պաշտոնների գնահատում և պաշտոնների անձնագրերում (պաշտոնների նկարագրերում) փոփոխությունների կատարում, Քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համաձայնեցում և հաստատում:
Վերջնաժամկետ. 2030թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 4.4 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Արաիկ Հայրապետյան Անահիտ Մանանդյան Գայանե Հարությունյան

Առաջարկություն 5

5. Ներքին պլանավորումը բարելավելու համար Արմստատին խրախուսվում է սկսել մշակել ծախսերի հաշվարկման համակարգ, որը հնարավորություն կտա գնահատել յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի և տվյալների մշակման ծառայության ռեսուրսների դեզագրեգացումը: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 10.1)

Ներկա իրավիճակը.

Արմստատն օգտագործում է համապարփակ համակարգ վիճակագրական ծրագրերի պլանավորման և հաստատման համար, որոնք կապված են բյուջետային պլանավորման հետ: Այնուամենայնիվ, առանձին վիճակագրական արտադրանքի հետ կապված ռեսուրսների օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ, քանի որ վիճակագրական արտադրանքի և գործընթացների արժեքը գնահատելու գործիքներ չեն մշակվել: Նոր վիճակագրական գործունեության և այլ զարգացումների համար անհրաժեշտ միջոցների գնահատումները համեմատաբար լայն են՝ առանց հղում կատարելու առկա փաստերին կամ նմանատիպ գործունեության իրական արժեքին:

Արժեքի գնահատման (կամ ծախսերի հաշվարկման) համակարգի ներդրումը Արմստատի ղեկավարությանը հնարավորություն կտա արդարացնել ռեսուրսների կարիքներն՝ ըստ գործընթացի և արտադրանքի, և հնարավորինս արդյունավետ օգտագործել առկա միջոցները: Նման համակարգը պետք է նաև բարելավի կառավարչական որոշումների կայացումը, քանի որ այն կինտեգրվի որակի կառավարման համակարգին և ունի որակի բարելավումներ խթանելու և արդյունավետության խնայողությունների հնարավորություններ բացահայտելու ներուժ: Արմստատն արդեն փաստաթղթավորել է իր վիճակագրական արտադրանքի մեծ մասը՝ համաձայն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM), որը հնարավորություն է տալիս ներդնել ծախսերի հաշվարկման համակարգ, քանի որ ռեսուրսները կարող են դասակարգվել մոդելի հիմնական փուլերի համաձայն: Սա կցուցադրի ֆինանսական կառավարման համակարգված մոտեցում, որը կօգնի Արմստատին հիմնավորել լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը:

Բարելավման ենթագործողություն 5.1. Ծախսերի հաշվարկման եվրոպական երկրների վիճակագրական գրասենյակների փորձի ուսումնասիրում՝ հնարավորության դեպքում Եվրոստատի փորձագետի ներգրավմամբ:

Վերջնաժամկետ. 2027թ. II եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 5.1 համար. Արմստատ

Բարելավման ենթագործողություն 5.2. Ծախսերի հաշվարկման մեթոդի և համակարգի մշակում՝ փորձագետի աջակցությամբ:

Վերջնաժամկետ. 2028թ. II եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 5.2 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 5.3. Փորձնական իրականացում:
Վերջնաժամկետ. 2029թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 5.3 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 5.4. Ծախսերի հաշվարկման ամբողջական համակարգի ներդրում:
Վերջնաժամկետ. 2030թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 5.4 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Արաիկ Հայրապետյան Սուսաննա Կարապետյան Անահիտ Սաֆյան Ռուզաննա Շաբոյան
Առաջարկություն 6 6. Արմստատը պետք է մշակի համապարփակ մարդկային ռեսուրսների ռազմավարություն՝ աշխատակիցների համար ավելի գրավիչ դառնալու և իրեն որպես ցանկալի աշխատավայր ներկայացնելու համար՝ համապատասխան հաղորդակցման ուղիներով: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 3.1)
Ներկա իրավիճակը. Արմստատը հիմնականում աշխատանքի է ընդունում քաղաքացիական ծառայողների և պարտավոր է օգտագործել Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կառավարվող կենտրոնական համակարգը, որն օգտագործվում է բոլոր պետական մարմինների կողմից: Կրտսեր ծառայողների պաշտոնների համար թեկնածուները ցուցակագրվում են հարցազրույցների համար՝ հիմնվելով վարկանիշային ցուցակում նրանց ստացած բալային համակարգի վրա: Վարկանիշային ցուցակներ կազմելու համար Քաղաքացիական ծառայության գրասենյակը տարեկան առնվազն երկու անգամ անցկացնում է ստանդարտացված թեստավորում: Ոչ քաղաքացիական ծառայողների պաշտոնների համար հավաքագրումը, որը ներառում է վիճակագրական տվյալների հավաքագրման ծրագրերում, մարդահամարներում, տեխնիկական սպասարկման և վարչական աջակցության դերերում ներգրավված անձնակազմը, իրականացվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն: Ընտրության գործընթացն իրականացվում է կառուցվածքային հարցազրույցների միջոցով՝ ոլորտային փորձագետի մասնակցությամբ, գլխավոր քարտուղարի հսկողության ներքո:

Չնայած Արմստատը քաղաքացիական ծառայության թափուր աշխատատեղերի հայտարարությունները տարածում է իր պաշտոնական կայքում և խրախուսում է համապատասխան ակադեմիական առարկաների շրջանավարտներին դիմել պրակտիկայի և պաշտոնների՝ համագործակցելով Հայաստանի ակադեմիական հաստատությունների հետ, նոր տաղանդներ վարձելու ռազմավարական մոտեցումը, կարծես, անհրաժեշտ է:

Գնահատող թիմը կարծում է, որ ակտիվ հավաքագրման քաղաքականությունը՝ զուգորդված աշխատակիցների վերապատրաստմամբ, կարիերայի ուղիների սահմանմամբ, նախաձեռնողական ներքին հաղորդակցությամբ, աշխատանքային պայմանների աստիճանական բարելավմամբ և աշխատանքային կարգավորումների կատարելագործմամբ, կարող է Արմստատը դարձնել ավելի գրավիչ աշխատանքի վայր: Նման միջոցառումներն ու քաղաքականությունները կարող են ներառվել մարդկային ռեսուրսների համապարփակ ռազմավարության մեջ, որը պետք է աջակցվի համապատասխան հաղորդակցությամբ, այդ թվում՝ սոցիալական ցանցերի (մասնավորապես՝ LinkedIn-ի) միջոցով:

Բարելավման ենթագործողություն 6.1. Աշխատակիցների համար առավել գրավիչ դառնալու և որպես ցանկալի աշխատավայր ներկայանալու նպատակով Արմստատը կիրականացնի հետևյալ միջոցառումները.

- Թափուր պաշտոնների համալրման համար հայտարարությունների հրապարակում Արմստատի կայքէջում, Facebook-ում, Քաղաքացիական ծառության և e-work աշխատանքի տեղավորման հարթակներում, Linkedin էջի ստեղծում և ակտիվ կառավարում,
- Արմստատի աշխատակիցների բավարարվածության ամենամյա հետազոտության անցկացում,
- Արմստատում պրակտիկա անցնող ԲՈՒՀ-երի ուսանողների հետ առավել ակտիվ աշխատանքի իրականացում, ներառյալ Արմստատի գրավչության ներկայացում,
- Նոր ընդունված կրտսեր աշխատակիցների համար ներածական դասընթացների շարունակական իրականացում,
- Թափուր պաշտոնների համալրման համար առաջնահերթ ներքին մրցույթների անցկացում և կատարողականի գնահատման հիման վրա առանց մրցույթի պաշտոնային առաջխաղացման իրականացում:

Վերջնաժամկետ. Շարունակական՝ սկսած 2026թ. II եռամսյակից

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 6.1 համար. Արմստատ

Բարելավման ենթագործողություն 6.2. «Արմստատի Համապարփակ մարդկային ռեսուրսների ռազմավարություն» փաստաթղթի մշակում:

Վերջնաժամկետ. 2027թ. I եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 6.2 համար. Արմստատ

Արաիկ Հայրապետյան
Գայանե Հարությունյան

2. ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ (Առաջարկություններ 7 - 14)

Առաջարկություն 7

7. Արմստատը պետք է ստեղծի համապարփակ փաստաթուղթ, որը հստակորեն կուրվագծի տվյալներ տրամադրողների և պաշտոնական վիճակագրություն արտադրողների միջև եղած տարբերությունները: Փաստաթուղթը պետք է սահմանի պաշտոնական վիճակագրություն արտադրողների համար հատուկ չափանիշներ և նկարագրի պաշտոնական վիճակագրություն արտադրողի կարգավիճակով պայմանավորված առավելություններն ու պարտականությունները: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 1bis.1)

Ներկա իրավիճակը.

Արմստատը տարիների ընթացքում ինտենսիվ աշխատանք է կատարել տվյալների մատակարարների հետ համագործակցությունը խթանելու և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համակարգման բարելավման ուղղությամբ: Տասնինը համաձայնագրեր՝ փոխըմբռնման հուշագրերի, համաձայնագրերի, համատեղ հրամանագրերի, կառավարության որոշումների, համագործակցության հուշագրերի և համագործակցության համաձայնագրերի տեսքով, կնքվել են իրականացվող գործողությունները նկարագրելու համար: Գնահատող թիմը գործող համաձայնագրերի տարբեր տեսակների լայն ցանկը համարում է լավ պրակտիկա: Այս միջոցառումներից մի քանիսը ձեռնարկվել են պաշտոնական վիճակագրության արտադրության համար Արմստատին տվյալների տրամադրումն ապահովելու համար, մինչդեռ մյուսները նպատակ ունեն ապահովել համագործակցությունը: Արմստատը նույնականացրել է ևս 12 հավելյալ ոլորտ, որտեղ կարելի է համաձայնագրեր կնքել:

Ազգային համակարգումը ներառում է ազգային վիճակագրական ծրագրեր, խորհրդատվական մարմիններ, համագործակցության գործընկերություններ, տարածման հարթակներ, հայեցակարգեր և դասակարգումներ: Նպատակն է ձևավորել ինտեգրված և համահունչ հայկական վիճակագրական համակարգ, ինչպես նաև ընդլայնել վարչական տվյալների օգտագործումը վիճակագրական նպատակներով: Սակայն, փորձագիտական գնահատման այցի ընթացքում գնահատող թիմը հասկացավ, որ տվյալներ տրամադրողների և տվյալներ արտադրողների միջև տարբերությունը լիովին պարզ չէ: Արմստատին խրախուսվում է մտորել այս տարբերակման շուրջ և ստեղծել փաստաթուղթ, որը

կօգտագործվի պաշտոնական վիճակագրության պոտենցիալ արտադրողների հետ ապագա բանակցություններում:
Բարելավման գործողություն 7. Պաշտոնական վիճակագրության տվյալներ տրամադրողների և պաշտոնական վիճակագրություն արտադրողների միջև տարբերությունները, պաշտոնական վիճակագրություն արտադրողների համար հատուկ չափանիշները, ինչպես նաև պաշտոնական վիճակագրություն արտադրողի կարգավիճակի հետ կապված առավելություններն ու պարտականությունները նկարագրող համապարփակ փաստաթղթի մշակում: Փաստաթղթի ընդունում Վիճակագրության պետական խորհրդի կողմից:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 7 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Անահիտ Սաֆյան Սարգիս Լալայան
Առաջարկություն 8 8. Արմստատին խրախուսվում է ստեղծել արտադրողների կոմիտե և հստակ սահմանել իր դերը ամբողջ Հայաստանի վիճակագրական համակարգում տվյալների որակի խթանման գործում: Արմստատի կողմից մշակված պաշտոնական վիճակագրության արտադրողների համար ազգային որակի ուղեցույցները պետք է ընդունվեն և վերահսկվեն այս կոմիտեի կողմից, և պետք է ընդունվի ամբողջ Հայաստանի վիճակագրական համակարգի համար ընդհանուր ուսումնական ծրագիր: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 1bis.2)
Ներկա իրավիճակը. Արմստատը լայն և լավ աշխատանքային հարաբերություններ ունի պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների հետ: Առկա է համատեղ վիճակագրական ծրագիր ամբողջ Հայաստանի վիճակագրական համակարգի համար, որն Արմստատը, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, համակարգում է ամեն տարի: Արմստատը կազմակերպում է հանդիպումներ և վերապատրաստումներ և կառավարում է վիճակագրական դասակարգումները Հայաստանի վիճակագրական համակարգի համար: Արմստատի կողմից կնքված համաձայնագրերի մեծ մասը վերաբերում է տվյալների տրամադրմանը, բայց Արմստատը նաև համակարգում է տվյալներն Արժույթի միջազգային հիմնադրամի համար՝ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (SDDS) հիման վրա: «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն, միայն Կենտրոնական բանկն է սահմանվում՝ որպես պաշտոնական վիճակագրություն արտադրող: Այնուամենայնիվ, այլ ազգային մարմիններ կարող են նշանակվել որպես պաշտոնական վիճակագրության արտադրողներ՝ դիմելով Վիճակագրության պետական խորհրդին: Ներկայումս միայն Ֆինանսների

նախարարությունն է հաջողությամբ անցել այս ընթացակարգը: Արմստատը մշակել է որակի ուղեցույցներ, սակայն դրանք տարածվում են միայն Արմստատի ներսում, և չկա ընդհանուր հարթակ՝ Հայաստանի վիճակագրական համակարգում ստանդարտների կիրառումը խթանելու և մշտադիտարկելու համար: Հայաստանի վիճակագրական համակարգը կարող է օգուտ քաղել արտադրողների ավելի ֆորմալ համակարգումից: Արտադրողների կոմիտեի ներդրումը կարող է օգտագործվել ամբողջ Հայաստանի վիճակագրական համակարգի համար ընդհանուր որակի ուղեցույցները քննարկելու և խթանելու նպատակով, ինչը համակարգումը կդարձնի ավելի համակարգված և կայուն:
Բարելավման գործողություն 8. Պաշտոնական վիճակագրություն արտադրողների կոմիտեի (խորհրդի) ստեղծում և կոմիտեի գործունեության կանոնակարգի հաստատում:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 8 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Մարիամ Դալլաքյան Անահիտ Սաֆյան Սարգիս Լալայան
Առաջարկություն 9 9. Ֆինանսների նախարարությունը, Կենտրոնական բանկը և Արմստատը պետք է կնքեն եռակողմ համաձայնագիր՝ կառավարության ֆինանսական վիճակագրության արտադրությանը մասնակցող հաստատությունների միջև մանրամասն տվյալների հոսքերը և փոխանցման ժամկետները որոշելու համար: (Բարելավման հետ կապված՝ Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 8.6)
Ներկա իրավիճակը. Ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի և Արմստատի միջև տեխնիկական մակարդակով համագործակցությունը գերազանց է: Կառավարության ֆինանսների վիճակագրության արտադրության հետ կապված գործընթացները շարունակաբար կատարելագործվում են, և այս կարծիքը կիսում են բոլոր ներգրավված կողմերը: Հետագա բարելավումները խթանելու համար պետք է ստեղծվի եռակողմ համագործակցության պաշտոնական շրջանակ: Ֆինանսների նախարարի, Կենտրոնական բանկի կառավարչի և Արմստատի նախագահի կողմից ստորագրված բարձր մակարդակի համաձայնագիրը պետք է սահմանի հաստատությունների միջև տվյալների մանրամասն հոսքերը և փոխանցման ժամկետները: Նման համաձայնագիրը պետք է ներառի տվյալների անվտանգ փոխանակման, ուշացումների կանխարգելման և անհամապատասխանությունները նվազագույնի հասցնելու արձանագրություններ: Նման համաձայնագիրը կօգնի կառավարության ֆինանսական վիճակագրության

արտադրությունը վերածել միասնական գործընթացի և պետք է բարելավի վստահությունը ներգրավված հաստատությունների միջև և, ընդհանուր առմամբ, պաշտոնական վիճակագրության մեջ:
Բարելավման գործողություն 9. Ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի և Արմստատի միջև եռակողմ փոխըմբռնման հուշագրերի կնքում՝ պետական ֆինանսների վիճակագրության արտադրության վերաբերյալ մանրամասն տվյալների հոսքերը և փոխանցման վերջնաժամկետները սահմանելու նպատակով:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 9 համար. Ֆինանսների նախարարություն, Կենտրոնական բանկ, Արմստատ
Լիլիթ Պետրոսյան Հայկուշ Տիտիզյան Քրիստինե Պողոսյան Սեդա Մովսիսյան Անահիտ Հարությունյան Արաիկ Հայրապետյան
Առաջարկություն 10 10. Ֆինանսների նախարարությանը խրախուսվում է բարձրացնել պաշտոնական վիճակագրական հրապարակումների տեսանելիությունն իր կայքէջում, հրապարակել հրապարակումների օրացույց և շարունակել կատարելագործել իր ջանքերը 2014 թվականի Պետական ֆինանսների վիճակագրության ձեռնարկի ներդրման ուղղությամբ՝ միաժամանակ զարգացնելով ամուր համագործակցություն Արմստատի հետ: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 15.1 և 6.5)
Ներկա իրավիճակը. Ֆինանսների նախարարության Պետական ֆինանսների վիճակագրության բաժինը պաշտոնական վիճակագրության ճանաչված արտադրող է: Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության առաջարկությամբ բաժինը վերջերս ստեղծվել է՝ որպես առանձին ստորաբաժանում: Այն կազմում և տարածում է ամսական և եռամսյակային պետական ֆինանսական վիճակագրությունը, ներառյալ ընդհանուր կառավարության գործառնությունների, կենտրոնական կառավարության գործառնությունների և ընդհանուր կառավարության պարտքի վերաբերյալ տվյալները: Բաժինը նաև պատասխանատու է ինստիտուցիոնալ միավորների ոլորտային դասակարգման համար՝ համաձայն SNA 2008/ESA 2010-ի: Այն սերտորեն համագործակցում է Արմստատի հետ և տրամադրում է տվյալներ տարբեր վիճակագրական արտադրանքի, այդ թվում՝ ազգային հաշիվների համար: Չնայած բաժինը հրապարակում է իր վիճակագրությունը նախարարության պաշտոնական կայքում, այս վիճակագրությունը հստակորեն չի տարբերակվում այլ տվյալներից և հստակորեն չի ընդգծվում՝ որպես պաշտոնական վիճակագրություն: Բաժինը նշում է, որ խստորեն հետևում է միջազգային չափանիշներին և

ուղեցույցներին: Պետական ֆինանսների վիճակագրությունը (ՊՖՎ) ներկայումս կազմվում է հիմնականում կանխիկի հիման վրա՝ համաձայն ԱՄՀ-ի ՊՖՎ 2001 ձեռնարկի: Բաժինը նախատեսում է կուտակային հաշվառման անցմանն առաջնահերթություն տալ և ՊՖՎ-ի արտադրությունը համապատասխանեցնել ձեռնարկի 2014 թվականի տարբերակին:
Բարելավման գործողություն 10. Պետական ֆինանսների վիճակագրության (GFS) որակի, թափանցիկության և միջազգային համադրելիության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կիրականացնի հետևյալ հիմնական գործողությունները. 1.Ինստիտուցիոնալ ամրապնդում Պաշտոնականացնել GFS-ի կազմման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների միջև տվյալների փոխանակման դերերը, պատասխանատվությունները և ժամկետները: 2.Միջգերատեսչական համակարգում Կնքել տվյալների փոխանակման վերաբերյալ պաշտոնական համաձայնագիր Արմստատի և Կենտրոնական բանկի հետ՝ ապահովելով տվյալների ժամանակին և արդյունավետ փոխանակումը: 3.Ծածկույթի ընդլայնում Սեկտորիզացիայի արդյունքների հիման վրա նախաձեռնել GFS-ի ծածկույթի աստիճանական ընդլայնման գործընթաց՝ հանրային հատվածում փուլային ներառելով ոչ առևտրային կազմակերպությունները, պետական ոչ ֆինանսական կազմակերպությունները և հիմնադրամները: 4.Տվյալների կանոնավոր տարածում Ապահովել կենտրոնական և ընդհանուր կառավարության գործունեության ամսական և եռամսյակային տվյալների կանոնավոր կազմումը և հրապարակումը: 5.Մեթոդաբանական համապատասխանեցում Միջազգային ստանդարտներին (GFSM 2014) համապատասխան աստիճանաբար անցում կատարել դրամարկղային (cash-based) հաշվառումից հաշվեգրման (accrual-based) հաշվառման: 6.Թափանցիկություն և մատչելիություն Ստեղծել GFS-ին նվիրված առանձին վեբ էջ՝ ներառելով համապատասխան իրավական շրջանակը, տվյալների շարքերը և նախապես հրապարակվող թողարկման օրացույցը: 7.Վերանայման քաղաքականություն Հաստատել և հրապարակել թափանցիկ վերանայման քաղաքականություն՝ տվյալների արժանահավատությունն ու կանխատեսելիությունն ուժեղացնելու նպատակով:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 10 համար.
Ֆինանսների նախարարություն

Լիլիթ Պետրոսյան
Հայկուշ Տիտիզյան

Առաջարկություն 11

11. Շրջակա միջավայրի նախարարության հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնը պետք է շարունակի դասակարգվել՝ որպես տվյալներ տրամադրող, և խրախուսվում է պահպանել լավ համագործակցություն Արմստատի հետ՝ բարձրորակ մուտքային տվյալների տրամադրման հարցում: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 8.7)

Ներկա իրավիճակը.

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնը գտնվում է Շրջակա միջավայրի նախարարության ներքո և պատասխանատու է հիդրոօդերևութաբանական պայմանների, անտառտնտեսության (փայտանյութի ծավալ, անտառային հրդեհներ և անօրինական հատումներ, անտառահատման և անտառապատման տարեկան ցուցանիշներ), պահպանվող տարածքների (անտառային ծածկույթ և պահպանման ջանքեր), ջրային կենսառեսուրսների արհեստական վերարտադրության, մթնոլորտ վտանգավոր նյութերի արտանետումների՝ ստացիոնար և շարժական աղբյուրներից, ջրային ռեսուրսների վիճակագրության (ջրառ, օգտագործում և աղտոտում), թափոնների կառավարման տվյալների (արդյունաբերական և քաղաքային թափոնների առաջացում և մաքրում), շրջակա միջավայրի աղտոտման մոնիթորինգի, ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների գույքագրման և հողային ծածկույթի վերաբերյալ տեղեկատվության պատրաստման համար: Ընդհանուր առմամբ, այն մոնիթորինգ է իրականացնում հողի, օդի, ջրի, աղտոտվածության և անտառների որակի վերաբերյալ: Կենտրոնը որակի ստուգումներ է անցկացնում մոնիթորինգի կետերից հավաքված տվյալների, ինչպես նաև լաբորատորիաներից ստացված տվյալների որակի վերաբերյալ: Սրանք առաջնային տվյալների որակի ստուգումներ են, մինչդեռ չի կիրառվում որևէ համապարփակ որակի շրջանակ: Տվյալներն ամսական հրապարակվում են տարբեր տեղեկագրերում և զեկույցներում՝ հետևելով հրապարակումների օրացույցին: Այս հրապարակումները ներառված են նաև Արմստատի թողարկումների օրացույցում: Ավելին, կենտրոնը տեղյակ է իր շահառուների և օգտագործողների կարիքների մասին և նախատեսում է իր տվյալները հասանելի դարձնել ավելի ժամանակակից եղանակներով և ուղիներով: Վերջապես, կենտրոնը որոշ առաջնային տվյալներ է ներմուծում Արմստատի շրջակա միջավայրի հաշիվների համակարգ:

Այնուամենայնիվ, կենտրոնն ինքը պաշտոնական վիճակագրություն չի մշակում, այլ, որպես վարչական տվյալների և տեղեկատվության տրամադրող, նպաստում է պաշտոնական վիճակագրության արտադրությանը. հետևաբար, այն չպետք է

համարվի Հայաստանի վիճակագրական համակարգի մաս՝ որպես վիճակագրական մարմին: Նույնիսկ որպես վարչական տվյալներ տրամադրող, այն կարող է հետագայում բարելավել իր որոշ գործողություններ, ինչպիսիք են՝ օգտագործողներին ավելի ժամանակակից և նպատակային ծառայություն մատուցելը և իր կողմից արտադրվող որոշ տվյալների որակի մոնիթորինգի բարելավումը: Արմստատի հետ համագործակցության լավ մակարդակի պահպանումը թույլ կտա Կենտրոնին օգտվել Արմստատի փորձից՝ որակի կառավարման համակարգ ստեղծելու և իր օգտագործողների հետ ավելի ակտիվորեն շփվելու հարցում:

Բարելավման ենթագործողություն 11.1.

Նպատակ ունենալով բարձրացնել տվյալների որակը, ապահովել դրանց միջազգային չափանիշներին համապատասխանությունը և օգտագործողներին տրամադրել ավելի ժամանակակից, նպատակային և հասանելի ծառայություններ՝ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը նախատեսում է իրականացնել հետևյալ բարելավման գործողությունները.

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացում՝ համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 611-Լ որոշման.

- Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացում՝ ավտոմատ, շարունակական չափումների ապահովմամբ և միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնոլոգիաների ներդրմամբ,
- Մոնիթորինգի ցանցի տարածական օպտիմալացում՝ տվյալների ներկայացուցչականության բարձրացման նպատակով:

Վերջնաժամկետ. 2029թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 11.1.
համար. ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

Բարելավման ենթագործողություն 11.2.

Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի շարունակական արդիականացում ժամանակակից սարքավորումներով և փորձարկվող ցուցանիշների ցանկի համապատասխանեցում միջազգային ստանձնած պարտավորություններին:

Վերջնաժամկետ. 2030թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 11.2
համար. ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

Բարելավման ենթագործողություն 11.3.

Թվայնացում և տվյալների հասանելիություն

- Մոնիթորինգի տվյալների հավաքագրման, պահպանման և մշակման գործընթացների թվայնացում,

• Ժամանակակից առցանց հարթակների և բաց տվյալների գործիքների ներդրում՝ տվյալների հասանելիության և օգտագործման դյուրացման համար, • API-ների և ինտերակտիվ վահանակների զարգացում:
Վերջնաժամկետ. 2030թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 11.3 համար. ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
Բարելավման ենթագործողություն 11.4. **Տվյալների որակի կառավարման համակարգի ներդրում** • Վարչական տվյալների փոխանցման մեխանիզմների բարելավում՝ համաձայնեցված ձևաչափերով և ժամանակացույցով, • Արմստատի փորձի օգտագործում՝ որակի կառավարման և օգտագործողների հետ հաղորդակցության բարելավման ուղղությամբ:
Վերջնաժամկետ. 2030թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 11.4 համար. ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, Արմստատ
Նելլի Բաղդասարյան Աննա Հակոբյան
Առաջարկություն 12 12. Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը պետք է շարունակի դասակարգվել՝ որպես տվյալներ տրամադրող: Վարչական բնակչության ռեգիստր մշակելու ջանքերը պետք է շարունակվեն՝ ներգրավելով նաև Արմստատին՝ վիճակագրական հասկացությունների և սահմանումների հետ համապատասխանությունն ապահովելու համար: Ներքին գործերի նախարարությանը խրախուսվում է բարձրացնել հանրային իրազեկությունը վարչական բնակչության ռեգիստրի կարևորության վերաբերյալ: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 8.7)
Ներկա իրավիճակը. Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը եռամսյակային կտրվածքով Արմստատին է տրամադրում միգրացիայի, ապաստան հայցողների, բնակության կարգավիճակ ստացած օտարերկրացիների և քաղաքացիության (կամ դրանց դադարեցման) վերաբերյալ ամփոփ տվյալներ իրենց վարչական ռեգիստրներից: Ներկայումս Ծառայությունը հրապարակում է միայն Արմստատի տվյալները և չունի լրացուցիչ վիճակագրություն կազմելու և հրապարակելու ծրագրեր. հետևաբար, այն չպետք է համարվի Հայաստանի վիճակագրական համակարգի մաս՝ որպես վիճակագրական մարմին: Ծառայության վիճակագրական բաժինը նոր է ստեղծվել, և անձնակազմի կարիքները լուծվել են: Նախատեսվել են հետագա վերապատրաստումներ, այդ

թվում՝ Արմստատի և մասնագիտացված միջազգային գործակալությունների փորձագետների կողմից վարվող նիստեր: Բնակչության պետական ռեգիստրի մասին մշակվող նոր օրենքը կարևորագույն նշանակություն կունենա բնակչության կայուն ռեգիստր ստեղծելու գործում և սահմանում է Ներքին գործերի նախարարության կենտրոնական դերը: Կարևոր կլինի, որ Արմստատը ներգրավված լինի այս գործում՝ միջազգային չափանիշներին, դասակարգումներին և մեթոդաբանություններին համապատասխանությունն ապահովելու համար: Ճշգրիտ բնակչության ռեգիստր ապահովելու համար անհրաժեշտ ջանքերը չպետք է թերագնահատվեն: Հատկապես արտագաղթի դեպքում, Հայաստանից հեռանալու և բնակչության ռեգիստրից դուրս գրվելու համար սահմանափակ խթաններ կան: Միջազգային չափանիշներին համապատասխանության կարևորության և բազմաթիվ վարչական աղբյուրների հետ ինտեգրման, ինչպես նաև վարչական և բնակչության ռեգիստրներում տեղեկատվության ճշգրտության ներկառուցված համապատասխանության ստուգման և կիրառման վերաբերյալ հանրային իրազեկությունը կարևոր է բնակչության ռեգիստրի բավարար որակը և ճշգրտությունն ապահովելու համար:
Բարելավման ենթագործողություն 12.1. 2027թ.-ից կիրարկվելիք Բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) մասին նոր օրենքով նախատեսվող ԲՊՌ նոր տվյալների շտեմարանում բնութագրիչների առկայության և ամբողջականության գույքագրում, այս առումով հնարավոր խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում:
Վերջնաժամկետ. 2028թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 12.1 համար. ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ Արմստատի մեթոդաբանական աջակցությամբ
Բարելավման ենթագործողություն 12.2. Մեթոդաբանական օժանդակություն տրամադրում ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը, այդ թվում՝ միջազգային գործընկերների աջակցությամբ, ԲՊՌ-ում պահվող տեղեկությունները՝ միջազգայնորեն ընդունված վիճակագրական սահմանումներին, դասակարգումներին, հասկացություններին և չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ միտված ԲՊՌ տվյալների բավարար որակի ապահովմանը:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 12.2 համար. ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, Արմստատ, ոլորտի միջազգային գործընկերներ

Բարելավման ենթագործողություն 12.3. ԲՊՌ նախատեսվող նոր տվյալների շտեմարանից պաշտոնական վիճակագրության արտադրության նպատակով անհրաժեշտ տվյալների ցանկի արդիականացում և օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմերով դրանց ստացում և օգտագործում:
Վերջնաժամկետ. 2029թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 12.3 համար. ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, Արմստատ
Բարելավման ենթագործողություն 12.4. Հանրային իրազեկվածության բարձրացում՝ միտված ԲՊՌ նոր տվյալների շտեմարանում պահվող տվյալների ամբողջականության, արդիականության և որակի ապահովման կարևորության մասին հանրային ընկալման ամրապնդմանը և, ըստ այդմ, բնակչության կողմից ԲՊՌ շրջանակում տվյալների ձևավորման աջակցմանը:
Վերջնաժամկետ. Շարունակական, 2027թ. ԲՊՌ մասին օրենքի կիրարկումից սկսած մինչև 2030թ. IV եռամսյակ:
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 12.4 համար. ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
Վարդան Արևշատյան Կարինե Կույումջյան Արմինե Ավետիսյան
Առաջարկություն 13 13. Առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող Առողջապահության ազգային ինստիտուտը զգալի ներուժ ունի՝ որպես պաշտոնական վիճակագրության արտադրող պիտակավորվելու համար: Եթե նրանք դառնան պաշտոնական վիճակագրության արտադրող, խրախուսվում է բարելավել Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի հետ համապատասխանությունը, օրինակ՝ առաջնահերթություն տալով օգտագործողների կարիքներին և բարելավելով տվյալների տարածման հարմարավետությունը: Արմստատի հետ համագործակցելով՝ Առողջապահության ազգային ինստիտուտը պետք է մշակի որակի և մեթատվյալների հաշվետվությունների գործիք և ստեղծի որակի կառավարման համակարգ: Համապատասխան պետական մարմիններին խրախուսվում է աջակցել այս բարելավումներին համապատասխան ռեսուրսներով՝ հաջողությունն ապահովելու համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 1bis.1)
Ներկա իրավիճակը. Առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտը (ԱԱԻ) պաշտոնապես Այլ ազգային մարմին (ԱԱՄ) չէ: Այնուամենայնիվ, այն

հրավիրվել է՝ մասնակցելու փորձագիտական գնահատմանը՝ որպես առողջապահական հարցերի վերաբերյալ վիճակագրություն արտադրող: ԱԱԻ-ն մշակում և տարածում է մահվան դեպքերի, հոսպիտալացման, առաջնային առողջապահական ծառայություններին այցելությունների, ծննդաբերությունների և այլնի վերաբերյալ վիճակագրություն: Տեղեկատվությունը ստացվում է 800 առողջապահական հաստատություններից, որոնք ներառում են 25 տարբեր ձևաթղթեր, և հիմնականում Excel ֆայլերից: Որոշ տվյալներ վերցված են նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից, որը կառավարության օգտագործման համար մշակված մասնավոր համակարգ է: ԱԱԻ-ն չունի անհատական տվյալների հասանելիություն:

ԱԱԻ-ն սերտորեն համագործակցում է բժշկական հաստատությունների և Առողջապահության նախարարության հետ, բայց ուրիշներից չի հավաքում համակարգված տեղեկատվություն օգտագործողների կարիքների վերաբերյալ: Որակի վերահսկողությունը իրականացվում է Excel աղյուսակներում՝ սխալների և անհամապատասխանությունների ստուգմամբ, և դրանք նախորդ տարվա հետ համեմատելով: ԱԱԻ-ի կայքը հասանելի է միայն հայերենով, և դրա կայքից վիճակագրությունը հեշտությամբ հասանելի չէ: ԱԱԻ-ն չի օգտագործում ստանդարտ՝ որակի հաշվետվություններ կամ այլ մեթատվյալներ տրամադրելու համար՝ օգտագործողների համար վիճակագրությունը նկարագրելու համար:

ԱԱԻ-ն ցուցաբերում է բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմ՝ որպես հասարակության համար խիստ կարևոր տվյալների արտադրող, և հայտնում է Արմստատի հետ գերազանց համագործակցության մասին: ԱԱԻ-ն, իր օգտագործողների հետ միասին, պետք է օգտվի պաշտոնական վիճակագրության ճանաչված արտադրող դառնալուց՝ այդպիսով առողջապահական հարցերի վերաբերյալ խիստ կարևոր տվյալները վերածելով պաշտոնական վիճակագրության:

Բարելավման գործողություն 13.

- Պաշտոնապես ամրագրել և ընդլայնել օգտագործողների ներգրավման առկա գործելակերպերը՝ ներդնելով օգտագործողների կարիքների բացահայտման և գնահատման համակարգված մեխանիզմներ.
- Հետագայում կատարելագործել տվյալների տարածման գործընթացները և օգտագործողի հարմարավետությունը, ներառյալ կայքի բարելավումը և վիճակագրական տեղեկատվության հասանելիության բարձրացումը.
- Մշակել վահանակներ (dashboards) և օգտագործողին համար հարմար տվյալների ներկայացման այլ գործիքներ՝ վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ու ընկալելիությունը բարելավելու նպատակով.
- Ամրապնդել և ինստիտուցիոնալացնել վիճակագրական թողարկման օրացույցի կիրառումը.

- Ընդլայնել տվյալների հավաքումը՝ ավելացնելով էլեկտրոնային տվյալների աղբյուրների օգտագործումը, ներառյալ Էլեկտրոնային առողջապահական համակարգը.
- Բարելավել և արդիականացնել տվյալների մշակման համակարգերը.
- Ներդնել Հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD) 11-րդ վերանայման հայկական տարբերակը.
- Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների ռեգիստր և վերլուծական վահանակներ՝ աշխատակիցների կարողությունների վրա հիմնված կառավարման աջակցման նպատակով.
- Արմստատի հետ համագործակցելով մշակել ստանդարտացված գործիքներ՝ որակի և մեթատվյալների հաշվետվությունների համար:

Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 13 համար.
Առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտ, Արմստատ

Վարդան Արևշատյան
Ալինա Գրիգորյան
Անահիտ Սաֆյան
Ռուզաննա Շաբոյան

Առաջարկություն 14

14. Արմստատը պետք է վերանայի, թարմացնի և կնքի ստանդարտացված համաձայնագրերը (Փոխըմբռնման հուշագրեր, համաձայնագրեր, հրամանագրեր և համատեղ հրամաններ) տվյալներ տրամադրողների հետ՝ հիմնվելով նոր մշակված ստանդարտացված ձևանմուշի վրա, որը հստակորեն սահմանում է այդ փաստաթղթերի համար անհրաժեշտ բովանդակությունը: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 8.6)

Ներկա իրավիճակը.

Արմստատը գրավոր համաձայնագրեր է կնքել տվյալներ տրամադրողների և պաշտոնական վիճակագրություն արտադրողների հետ՝ փոխըմբռնման հուշագրերի, համաձայնագրերի, հրամանագրերի և համատեղ հրամանագրերի տեսքով: Գնահատող թիմը սա համարում է գերազանց պրակտիկա և խրախուսում է Արմստատին համաձայնագրեր կնքել այն տվյալներ տրամադրողների հետ, որոնց հետ դեռևս համաձայնագրեր չեն կնքվել: Կնքված համաձայնագրերը, կարծես, ունեն տարբեր ձևեր և բովանդակություն, և դրանց ստանդարտացումը կարող է օգտակար լինել ինչպես Արմստատի, այնպես էլ տվյալներ տրամադրողների համար: Ստանդարտացված մոտեցումը կարող է ներառել մեկ կամ մի քանի ստանդարտացված ձևանմուշներ՝ կախված համագործակցության ձևից և տրամադրվող տվյալներից: Ստանդարտացված ձևանմուշ(ներ)ը պետք է

բաղկացած լինի տեղեկատվության ստանդարտ հավաքածուից այն մասին, թե ինչ պետք է տրամադրվի, երբ պետք է տրամադրվի, ում պետք է տրամադրվի, ինչ ձևով պետք է տրամադրվի և ինչ որակի չափանիշներ պետք է ներառվեն տվյալների տրամադրումից առաջ:
Բարելավման գործողություն 14. Տվյալներ տրամադրողների հետ փոխըմբռնման հուշագրերի, համաձայնագրերի, որոշումների և համատեղ հրամանների վերանայում, արդիականացում և կնքում: Նոր ստանդարտացված ձևանմուշի մշակում:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 14 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Մարիամ Դալլաքյան Սարգիս Լալայան Աիդա Մարտիրոսյան
3. ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (Առաջարկություններ 15 - 19)
Առաջարկություն 15 15. Արմստատը պետք է շտապ մշակի նոր կայք՝ օգտագործողի համար հարմարավետությունը բարձրացնելու համար, և դիտարկի այն ազգային պորտալի վերածելու հարցը՝ Հայաստանի վիճակագրական համակարգի կողմից արտադրվող ողջ պաշտոնական վիճակագրության համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, 15.2 ցուցանիշ)
Ներկա իրավիճակը. Արմստատը քայլեր է ձեռնարկել իր վիճակագրության հասանելիությունն ու պարզությունը բարելավելու համար, ներառյալ ինֆոգրաֆիկայի օգտագործումը՝ տվյալների ընկալումը բարելավելու և օգտագործողների համար հարմար Կայուն զարգացման նպատակների հարթակ ապահովելու համար: Այնուամենայնիվ, գնահատող թիմը պարզել է, որ ներկայիս կայքը (www.armstat.am) բավարար չափով չի բավարարում իր օգտագործողների կարիքները: Կայքի կառուցվածքն ու դիզայնը հնացած են, ինչը նավիգացիան դարձնում է ոչ ինտուիտիվ և սահմանափակում է օգտագործողի ընդհանուր փորձը: Շատ օգտագործողների համար դժվար է գտնել տվյալների ժողովածուներ, հրապարակումներ և համապատասխան ցուցանիշներ, քանի որ ներկայիս կառուցվածքը չունի հստակ թեմատիկ կամ տիրույթային կազմակերպվածություն և չի առաջարկում առաջադեմ զտման կամ տեսակավորման տարբերակներ: Կայքում որոնման գործառույթը սահմանափակ է ծավալով և արդիականությամբ, ինչպես նաև թեմայի, հրապարակման ամսաթվի կամ վիճակագրական տիրույթի ֆիլտրման կամ տեսակավորման հնարավորությունները:

Արմստատն ընդունում է, որ ինտերակտիվ տվյալների վիզուալիզացիայի գործիքների բացակայությունը և Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) հնարավորությունների բացակայությունն էական սահմանափակումներ են: Օգտագործողները չեն կարող դինամիկ կերպով ուսումնասիրել կամ հարմարեցնել տվյալները, ինչը սահմանափակում է վերլուծություններին և միտումներին հասանելիությունը: Տվյալները հաճախ մասնատված են էջերի միջև կամ հասանելի են միայն ստատիկ ձևաչափերով, ինչն ավելի է բարդացնում հասանելիությունը և վերօգտագործումը:

Վիզուալ ներկայացման և տեխնոլոգիական ֆունկցիոնալության առումով, ներկայիս կայքը չի համապատասխանում ժամանակակից հասանելիության չափանիշներին: Այն լավ օպտիմիզացված չէ որոնողական համակարգերի կամ արհեստական բանականության ծրագրերի կողմից ինդեքսավորման համար: Այն նաև չունի տվյալների վիզուալիզացիայի, պատմությունների ներկայացման կամ օգտագործողների տվյալների հավաքածուների հետ փոխազդեցության գործիքներ, որոնք կբարելավեին վիճակագրության տարածումը և ըմբռնումը:

Գնահատող թիմը կարծում է, որ ներկայիս կայքը լիովին վերաձևավորված և նպատակային վիճակագրական տարածման հարթակով փոխարինելը պետք է դիտարկվի որպես գերակա խնդիր: Նման հարթակը պետք է ծառայի ոչ միայն որպես Արմստատի թվային դեմք, այլև հնարավոր է՝ որպես ազգային վիճակագրական պորտալ, որը կառաջարկի պաշտոնական վիճակագրությանը հասանելիություն՝ օգտագործողի վրա կենտրոնացած, ինտերակտիվ և բաց ձևաչափով: Պետք է նաև որոշումներ կայացվեն այն մասին, թե արդյոք պորտալը կներառի այլ պետական հաստատությունների կամ ոչ պաշտոնական աղբյուրների կողմից արտադրված վիճակագրությունը (տարբեր տեսակների միջև հստակ նշված տարբերակումներով):

Ակնհայտ է, որ Արմստատի տեղեկատվական տեխնոլոգիաների թիմը չունի նոր կայք կառուցելու տեխնիկական կարողություններ, և նման ջանքերը չեն կարող իրականացվել առանց լրացուցիչ միջոցների կամ դոնորների օգնության: Արմստատը պետք է ակտիվացնի իր ջանքերը՝ ապահովելու անհրաժեշտ միջոցները և սկսի մշակել մանրամասն տեխնիկական և ֆունկցիոնալ սպեցիֆիկացիաներ իր մշակման համար: Նոր կայքը պետք է հեշտությամբ որոնվող և դասակարգվող լինի տարբեր չափանիշներով, և այն պետք է օպտիմալացվի որոնողական համակարգերի և արհեստական բանականության կողմից օգտագործողի համար հարմարավետության և մատչելիության բարելավման համար: Մշակման գործընթացի ընթացքում պետք է կիրառվի պրոֆիլավորում և օգտագործողի թեստավորում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածման գործընթացի արդյունավետությանը:

Բարելավման ենթագործողություն 15.1. Նոր վիճակագրական վեբ հարթակի ստեղծման տեխնիկական առաջադրանքի (ToR) մշակում՝ ներառելով հարթակի հիմնական գործառութային և տեխնիկական պահանջների սահմանումը՝

միջազգային չափանիշներին և Եվրոպական վիճակագրական համակարգի (մասնավորապես՝ Եվրոստատի) մոտեցումներին համապատասխան:
Վերջնաժամկետ. 2027թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 15.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 15.2. Նոր, ժամանակակից վիճակագրական վեբ հարթակի մշակում, փորձարկում և գործարկում, որը կապահովի վիճակագրական տվյալների արդյունավետ տարածումն ու օգտագործելիությունը՝ ըստ վիճակագրական թեմաների (ոլորտների), հիմնական ինտերակտիվ ցուցանիշների և հրապարակումների, տվյալների տարածման օրացույցների, ժամանակակից գործիքներով հագեցած տվյալների բազաների, առաջադեմ որոնման հնարավորությունների և այլ գործիքների տեսքով:
Վերջնաժամկետ. 2028թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 15.2 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 15.3. Նոր հարթակի հետագա զարգացում՝ արդիականացման այլ նոր գործիքների ինտեգրման միջոցով:
Վերջնաժամկետ. 2029թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 15.3 համար. Արմստատ
Աիդա Մարտիրոսյան Արմենուհի Առուշանյան
Առաջարկություն 16 16. Արմստատը պետք է ինտեգրի իր վիճակագրական արտադրանքի տարածման ամսաթվերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները մեկ ինտերակտիվ տարածման օրացույցում, որը պետք է ներառի նաև վիճակագրական թողարկումների հրապարակման ցանկացած ուշացման վերաբերյալ մանրամասներ: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 6.5 և 13.4)
Ներկա իրավիճակը. Արմստատը ներկայումս օգտագործում է PDF ձևաչափով բազմաթիվ թողարկման օրացույցներ՝ իր վիճակագրական արտադրանքի հրապարակման ամսաթվերը հայտարարելու համար: Վիճակագրական արտադրանքի թողարկման ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է «նախնական թողարկման» օրացույցում. վիճակագրական հրապարակումների թողարկման ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է վիճակագրական հրապարակումների օրացույցում. ՏՏՀՍ (SDMX) տվյալները հասանելի են ՏՏՀՍ-ի նախնական թողարկման օրացույցում, և կա նաև առանձին վերանայման ժամանակացույց ՀՆԱ-ի համար: Արմստատն ունի սահմանված ընթացակարգ հանրությանն

ուշացումների դեպքում տեղեկացնելու համար. սակայն, Արմստատը նշում է, որ սահմանված ժամկետներից շեղումներ չեն գրանցվել: Վերը նշված բոլոր հրապարակումների օրացույցների ինտեգրումը մեկ, բազմաչափ հրապարակումների օրացույցում, որը կներառի բոլոր համապատասխան տեղեկությունները, ներառյալ սկզբնական ժամանակացույցից ցանկացած շեղման պատճառների բացատրությունը, կարող է բարելավել օգտագործողի համար հարմարավետությունը: Չնայած ինտերակտիվ օրացույցը պետք է լինի ժամանակակից վիճակագրական կայքի հիմքը, ինտեգրումը կարող է իրականացվել մինչև նոր կայքի ավարտը: Ավելին, Արմստատը պետք է վերլուծի, թե արդյոք կա փոխզիջում՝ ավելի արագ հրապարակման հասնելու համար մի փոքր ավելի մեծ ռիսկի դիմելու և ի սկզբանե նախատեսված հրապարակման ամսաթվերը բաց թողնելու հավանականությունը հնարավորինս մեծացնելու միջև:
Բարելավման ենթագործողություն 16.1. Միասնական ինտերակտիվ տարածման օրացույցի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ ինտեգրելով վիճակագրական արտադրանքների տարածման ամսաթվերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, որը կներառի վիճակագրական թողարկումների հրապարակման ցանկացած ուշացման վերաբերյալ մանրամասներ:
Վերջնաժամկետ. 2027թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 16.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 16.2. Միասնական ինտերակտիվ օրացույցի ներդրում և գործարկում նոր վիճակագրական վեբ հարթակի շրջանակում:
Վերջնաժամկետ. 2028թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 16.2 համար. Արմստատ
Նարինե Մուշեղյան Աիդա Մարտիրոսյան
Առաջարկություն 17 17. Արմստատին խրախուսվում է ավելացնել տարբեր վիճակագրական գրասենյակների կողմից առաջարկվող բաց կոդով վիճակագրական լուծումների օգտագործումը (օրինակ՝ STAGE, IST, PC-Axis և տարբեր R փաթեթներ): (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 10.2, 7.1 և 10.4)
Ներկա իրավիճակը. Ծրագրային ապահովման համար բաց կոդով լուծումների կիրառումը կարող է նվազեցնել ծախսերը և կախվածությունը սեփական ծրագրային ապահովումից: Քանի որ պաշտոնական վիճակագրությունն առևտրային ծրագրային ապահովման

արտադրողների համար նեղ ոլորտ է, բաց կոդով լուծումները հաճախ կարող են բավարարել այս կոնկրետ կարիքները՝ անհատականացված լուծումներով: Բաց կոդը զերծ չէ ծախսերից, քանի որ ընդհանուր առմամբ անհրաժեշտ են ուսուցում և հարմարեցումներ: Այնուամենայնիվ, մի քանի բաց կոդով լուծումներ աջակցվում են այլ Ազգային վիճակագրական ինստիտուտների կողմից (օրինակ՝ STAGE աշխարհագրական տարածման համակարգը՝ Սլովենիայի վիճակագրության կողմից առաջարկվող, IST տվյալների մշակման ծրագիրը՝ Սերբիայի վիճակագրության կողմից տրամադրվող, PC-Axis տարածման տվյալների բազան՝ Շվեդիայի վիճակագրության կողմից տրամադրվող, և TArgus վիճակագրական բացահայտման կառավարման ծրագիրը՝ Նիդեռլանդների վիճակագրության կողմից առաջարկվող) և/կամ ունեն ակտիվ օգտագործողների և մշակողների խմբեր, որոնք ապահովում են կանոնավոր թարմացումների իրականացումը և հրապարակումը, ինչպես նաև փորձի փոխանակումը: Օգտագործողների խմբերը նաև կիսվում են կոդով և ալգորիթմներով, որոնք կարող են օգտագործվել բաց կոդով ծրագրային ապահովման մեջ (տե՛ս, օրինակ, վիճակագրական ծրագրային ապահովման Awesome ցանկը): Արմստատն արդեն իսկ դրական փորձ ունի բաց կոդով Կայուն զարգացման նպատակների տարածման հարթակն օգտագործելու հարցում, որը գովաբանվել է հարցազրույց անցած օգտագործողների կողմից, և խստորեն խրախուսվում է շարունակել ուսումնասիրել այս ուղին՝ առաջ շարժվելու համար:
Բարելավման ենթագործողություն 17.1. Բաց կոդով սերվերային GIS լուծման ներդրում՝ վիճակագրական տվյալների քարտեզագրման և տարածման նպատակով (մասնավորապես՝ վիճակագրական հրապարակումների և տվյալների հավաքածոների համար քարտեզների ստեղծման նպատակով):
Վերջնաժամկետ. 2026թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 17.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 17.2. Տվյալների ինտերակտիվ տեսապատկերավորման գործիքների հետագա զարգացում՝ ապահովելով օգտագործողների համար քարտեզների հետ ինտերակտիվ աշխատելու հնարավորություններ:
Վերջնաժամկետ. 2027թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 17.2 համար. Արմստատ
Աիդա Մարտիրոսյան Արմենուհի Առուշանյան

Առաջարկություն 18

18. Արմստատին խրախուսվում է արագացնել նոր տվյալների աղբյուրների օգտագործումը վիճակագրական նպատակներով: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 8.6 և 9.4)

Ներկա իրավիճակը.

Արմստատը գիտակցում է նոր տվյալների աղբյուրների օգտագործման ներուժն ու կարևորությունը պաշտոնական վիճակագրության արտադրության համար: Հետևաբար, այն շեշտը դնում է բազմազան տվյալների համայնքների հետ աշխատանքի, վարչական տվյալներին հասանելիության բարելավման և նոր ոչ ավանդական տվյալների աղբյուրների՝ ինչպիսիք են մեծ տվյալները, աշխարհատարածական տեղեկատվությունը և քաղաքացիների տվյալները, օգտագործման վրա՝ տվյալների ավելի լավ ինտեգրման համար՝ տվյալների բացերը լրացնելու և տվյալների արդյունավետ կառավարման ապահովման համար, նպաստելով պաշտոնական վիճակագրության արտադրությանը:

Արմստատն ունի սահմանափակ փորձ այս նոր աղբյուրներն օգտագործելու հարցում, բայց առաջին քայլերն արել է՝ համագործակցելով Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի (ACSES) հետ՝ Ասիական զարգացման բանկի ֆինանսական աջակցությամբ: Ծրագրերը ներառում են վեբ սքրեյփինգի ներդրում՝ ՍԳԻ-ի համար գնային տեղեկատվություն հավաքելու համար, ինչպիսիք են բնակարանների վարձակալության, հյուրանոցների և ինքնաթիռների տոմսերի գները: Գնահատող թիմը խրախուսում է Արմստատին մեծացնել տվյալների սեփականատերերի և փորձագետների հետ, ինչպիսին է ACSES-ը, փոխգործակցությունը և ակտիվացնել հմտությունների մեջ ներդրումները, որոնք կօգնեն օգտագործել նոր տվյալների աղբյուրները վիճակագրական նպատակներով:

Բարելավման ենթագործողություն 18.1.

Մեծ տվյալների ներդրում՝ ավանդական գների դիտարկման մեթոդներին զուգահեռ՝ շեշտադրելով մեծ տվյալների ներառումը Հայաստանի վիճակագրական համակարգում, մասնավորապես՝ գների ինդեքսների ոլորտում՝ օրինակ օգտագործելով վեբ սկրեյփինգի տեխնիկաները: Ավանդական և այլընտրանքային մեթոդներով հավաքագրված գների ցուցանիշների ինտեգրում:

Վերջնաժամկետ. 2027 թ. III եռամսյակ:

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 18.1 համար. Արմստատ

Բարելավման ենթագործողություն 18.2.

ՍԳԻ-ի հաշվարկման նոր մեթոդաբանության մշակում՝ հիմնված տվյալների հավաքման համակցված մեթոդների վրա:

Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 18.2 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Զարուհի Ավետիսյան Մարիամ Երիցյան Վարդան Արևշատյան Աիդա Մարտիրոսյան
Առաջարկություն 19 19. Վիճակագրական նպատակներով վարչական ռեգիստրների օգտագործելիությունը բարելավելու համար կառավարությունը պետք է ապահովի եզակի նույնականացուցիչների միատեսակ օգտագործումը բոլոր պետական վարչական ռեգիստրներում: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 10.3 և 2.2)
Ներկա իրավիճակը. Վարչական ռեգիստրները մեծ ներուժ ունեն պաշտոնական վիճակագրություն արտադրելու համար, հատկապես, երբ դրանք կապված են եզակի նույնականացուցանիշների միջոցով: Վարչական ռեգիստրների օգտագործումը վիճակագրական նպատակներով կարող է հանգեցնել ծախսերի զգալի կրճատման՝ միաժամանակ բարելավելով արդյունավետությունը: Բարձրորակ վարչական ռեգիստրների համակարգ ստեղծելու համար կարևոր է որոշել, թե որ ռեգիստրն է ծառայում՝ որպես եզակի նույնականացուցիչների աղբյուր յուրաքանչյուր տվյալների տեսակի համար: Սա հնարավորություն է տալիս ապահովել վարչական ռեգիստրների փոխգործունակությունը և նպաստում է «միայն մեկ անգամ» սկզբունքի ներդրմանը, ինչը ենթադրում է, որ տվյալները վարչական ռեգիստր մուտքագրվում են միայն մեկ անգամ: Այս միանվագ մուտքագրման միջոցով տվյալները տարածվում և հասանելի են դառնում բոլոր փոխկապակցված ռեգիստրներում, ինչը հետագայում բարձրացնում է արդյունավետությունը և նվազեցնում է պատասխանների ծանրաբեռնվածությունը՝ կանխելով տեղեկատվության կրկնօրինակումը: Պաշտոնական վիճակագրության համար սա հնարավորություն է տալիս վերլուծություններ կատարել բազմաթիվ փոփոխականների վերաբերյալ, որոնք նախկինում հնարավոր էին միայն հետազոտությունների տվյալներով: Նույնքան կարևոր է, որ բազմաթիվ վարչական աղբյուրների կապը բարելավում է առանձին ռեգիստրների որակը՝ ապահովելով վավերացման և համապատասխանության ստուգման ավելի շատ տարբերակներ:
Բարելավման գործողություն 19. Տվյալների փոխանակման շերտի (ՏՓՇ) և եզակի նույնականացուցիչների ներդրում և միասնական օգտագործում, ինչը կապահովի վարչական ռեգիստրների փոխգործելիության բարձրացումը, պետական մարմինների տեղեկատվական համակարգերի միջև տվյալների անվտանգ և արդյունավետ փոխանակումն ու հասանելիությունը: ՏՓՇ-ն ծրագրային ապահովման գործիք է, որը

հնարավորություն է տալիս պետական տեղեկատվական համակարգին միացած շտեմարանների, ինչպես նաև այլ տեղեկատվական համակարգերի միջև ապահովելու ցանցային կապ և փոխանակելու տեղեկություններ թվային անվտանգ միջավայրում, որին Արմստատը և այլ պետական մարմիններ պետք է միանան որպես անդամներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏՓԾ միջավայրին ինտեգրվելը վերաբերելու է տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հետևաբար աշխատանքների ավարտը կախված է մասնակից բոլոր մարմինների աշխատանքի արդյունավետությունից:
Վերջնաժամկետ. 2028 թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 19 համար. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի (https://www.arlis.am/hy/acts/218686) համաձայն ստեղծված տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողով (ինքնավար մարմին):
Գագիկ Անանյան Մարիամ Դալլաքյան Աիդա Մարտիրոսյան Արմենուհի Առուշանյան
4. **Վիճակագրական գործընթացների բարելավում և ստանդարտների կիրառման ապահովում (Առաջարկություններ 20 – 26)**
Առաջարկություն 20 20. Արմստատին խրախուսվում է շարունակել և ընդլայնել իր ջանքերը՝ վիճակագրության մատչելիությունը, արդիականությունը և դեզագրեգացումը բարելավելու ուղղությամբ: (Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի բարելավման հետ կապված, ցուցանիշներ 11.1 և 13.3)
Ներկա իրավիճակը. Արմստատն արտադրում է վիճակագրական արտադրանքի և տեղեկատվության լայն շրջանակ, որոնք հրապարակում է իր կայքում: Այն նաև պարբերաբար խորհրդակցում է օգտագործողների կարիքների վերաբերյալ և քննարկում դրանք Օգտագործողների հանրային խորհրդի հետ: Այնուամենայնիվ, տարբեր կատեգորիաների օգտագործողների հետ հանդիպումների ժամանակ ստացվել է արձագանք, որ օգտագործողներին անհրաժեշտ են որոշակի հասարակական երևույթների վերաբերյալ ավելի շատ տվյալներ (օրինակ՝ թվայնացում, միգրացիա և կենսապայմաններ) և որ Արմստատը կարող է ավելացնել հրապարակվող տվյալների քանակը՝ հեշտ հասանելի և վերօգտագործելի ձևաչափով: Օգտագործողները նաև նշել են, որ տվյալները հասանելի են դառնում որոշակի ուշացումով, և որ ճշգրտության և արդիականության միջև փոխզիջման վերաբերյալ քննարկումները կարող են օգտակար լինել՝ արտացոլելով հիմնական ցուցանիշների համար արագ գնահատականների հայեցակարգը: Ավելին, օգտագործողները նշել են, որ անհրաժեշտ են ավելի շատ միկրոտվյալներ գիտական նպատակներով,

ինչպես նաև ավելի շատ դեզագրեգացված տվյալներ, ինչպիսիք են ըստ՝ տարածաշրջանի և սեռի, ավելի մանրամասն վերլուծության համար: Չնայած Արմստատը ստեղծում է պահանջվող տվյալների մի մասը, դրանք հասանելի են միայն հատուկ հարցման դեպքում, մինչդեռ մյուս տվյալները դեռ պետք է ստեղծվեն:
Բարելավման ենթագործողություն 20.1. Արմստատը կշարունակի բարելավել վիճակագրական տվյալների հասանելիությունը, արդիականությունը և դեզագրեգացիան՝ ընդլայնելով համագործակցությունը տվյալներ տրամադրողների և օգտագործողների հետ: Այդ նպատակով Արմստատը կիրականացնի հետևյալ գործողությունները. • ընդլայնել հրապարակվող տվյալների շրջանակը՝ ապահովելով առավել դեզագրեգացված ցուցանիշների հասանելիություն (օրինակ՝ ըստ տարածաշրջանի, սեռի և այլ հատկանիշների), • բարելավել տվյալների մատչելիությունը և վերօգտագործելիությունը՝ տվյալները տրամադրելով բաց և օգտագործողին հարմար ձևաչափերով, • ուսումնասիրել արագ գնահատականների (fast estimates) կիրառումը՝ հիմնական ցուցանիշների արդիականությունը բարձրացնելու նպատակով, • ընդլայնել գիտական նպատակներով միկրոտվյալների հասանելիությունը՝ պահպանելով գաղտնիության պահանջները, • շարունակաբար զարգացնել օգտագործողների հետ հետադարձ կապի մեխանիզմները՝ տվյալների պահանջարկը ավելի լավ գնահատելու նպատակով:
Վերջնաժամկետ. Շարունակական՝ սկսած 2027թ. I եռամսյակից
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 20.2. Գենդերային վիճակագրության ցուցանիշների ազգային համակարգի կատարելագործում՝ հիմնվելով Հայաստանի Ժամանակի օգտագործման հետազոտության (ATUS) արդյունքների վրա: ATUS-ը հնարավորություն կտա առաջին անգամ հաշվարկել Կայուն զարգացման նպատակների (SDG) 5.4.1 ցուցանիշը՝ «Անվճար տնային և խնամքի աշխատանքի վրա ծախսված ժամանակի համամասնությունը ըստ սեռի, տարիքի և գտնվելու վայրի»:
Վերջնաժամկետ. 2026 թ. III եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.2 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 20.3. Գյուղատնտեսական վիճակագրության դեզագրեգացման բարելավում ըստ հանրապետության, մարզի և խոշորացված համայնքի և սեռի՝ հիմնվելով 2024 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների վրա:
Վերջնաժամկետ. 2026 թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.3 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 20.4. GIZ-Armenia-ի աջակցությամբ՝ FAST Գլոբալ նախագծի շրջանակում Գենդերային վիճակագրության վահանակի ներդրում՝ համախմբելու առկա գենդերային տվյալները, բարելավելու դրանց հասանելիությունն, յուրաժամանակայնությունն ու թափանցիկությունը և խթանելու ներառական, միջհատվածային և պատշաճ տարանջատված վիճակագրության զարգացումը: Մշակման գործընթացը պետք է իրականացվի վարչական տվյալների տնօրինողների հետ սերտ համագործակցությամբ՝ նրանց թերօգտագործվող ներուժն արդյունավետ կիրառելու, գենդերային վիճակագրության համակարգի ամրապնդմանն ուղղված համաձայնեցված մոտեցում ապահովելու և այն երկրի թվայնացման օրակարգին համապատասխանեցնելու նպատակով:
Վերջնաժամկետ. 2027թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.4 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 20.5. Միգրացիայի վիճակագրության դեզագրեգացիայի բարելավում՝ համաձայն միգրացիայի պաշարների և հոսքերի վերաբերյալ տվյալների ստանդարտացված (ԵՄ) մեթոդաբանության՝ ըստ տարիքի և սեռի, քաղաքացիության երկրի, ծննդյան երկրի, ժամանման/մեկնման երկրի:
Վերջնաժամկետ. 2029թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.5 համար. Արմստատ և ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:
Բարելավման ենթագործողություն 20.6. Բնապահպանական ծախսերի դեզագրեգացիա ըստ շրջակա միջավայրի նպատակների դասակարգման (CEP)՝ ապահովելու տվյալների համապատասխանությունը եվրոպական ստանդարտներին և կառուցվածքային մոտեցում շրջակա միջավայրի պաշտպանության և ռեսուրսների կառավարման ոլորտներում:
Վերջնաժամկետ. 2029 թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 20.6 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Անահիտ Սաֆյան Վարդան Արևշատյան Աիդա Մարտիրոսյան Լիլիթ Պետրոսյան Նելլի Բաղդասարյան

Առաջարկություն 21

21. Արմստատը պետք է որոշի բոլոր համապատասխան վիճակագրական ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու համար անհրաժեշտ քայլերը: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 7.1)

Ներկա իրավիճակը.

Արմստատն արդեն իսկ զգալի ջանքեր է գործադրել համապատասխան եվրոպական չափանիշներին համապատասխանելու համար: Եվրոպական Միություն-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հետ կապված՝ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Այս միջոցառումները համաձայնեցվել են Եվրոստատի հետ և ներառում են Միգրացիայի վիճակագրություն, Թափուր աշխատատեղերի վիճակագրություն, Կառուցվածքային բիզնես վիճակագրություն, R&D վիճակագրություն/հանրային հատված, Ազգային հաշիվներ/ինստիտուցիոնալ ոլորտային հաշիվներ, Ֆինանսական վիճակագրություն/տնտեսության ոչ ֆինանսական կազմակերպություններ, Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրություն, Շրջակա միջավայրի վիճակագրություն/օդային հաշիվներ, SIMS V2.0, ISCED-F 2013, ISCO-08, ICSE-2020 Դասակարգումների օգտագործման վերաբերյալ ներածություն և ուսուցում: Արմստատը ՀԸԳՀ-ի երկրորդ փուլի համար ներառել է հետևյալ միջոցառումները՝ Ժողովրդագրական վիճակագրություն, Գյուղատնտեսական վիճակագրություն, R&D վիճակագրություն/մասնավոր հատված, Ֆինանսական հաշիվներ, ինչպես նաև Տարածում և Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում: Գնահատող թիմը ճանաչել է եվրոպական չափանիշներին համապատասխանելու արդեն իսկ ձեռնարկված ջանքերը և խրախուսում է Արմստատին անցկացնել ներքին բացերի վերլուծություն, որը կարող է օգտագործվել առաջնահերթությունների սահմանման և պլանավորման նպատակներով:

Իրավիճակը փոխվել է. ֆինանսական հաշիվներն այլևս չեն ներառվում միջոցառումների ցանկում, ուստի որևէ գործողություն չի նախատեսվում:

Բարելավման ենթագործողություն 21.1. Ժողովրդագրական վիճակագրության կատարելագործում:

1. ՀՀ միջպետական միգրացիայի ելքային տվյալների ստացման ապահովում՝ Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի (ՍԷԿՏ) տվյալների հիման վրա՝ Արմստատի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի համաձայն:
2. Միջմարդահամարային տարիների (2011-2022թթ.) ժողովրդագրական տվյալների վերահաշվարկների իրականացում ՀՀ 2022 թ. մարդահամարի հիման վրա:

Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ

Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 21.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 21.2. Գյուղատնտեսական վիճակագրության կատարելագործում՝ հիմնված Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի վրա: Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ստեղծում՝ հիմնվելով 2024թ. անցկացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների վրա:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 21.2 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 21.3. Մասնավոր հատվածում հետազոտությունների և մշակումների վիճակագրության ներդրում: 1. Մասնավոր հատվածում հետազոտությունների և մշակումների վիճակագրության հետազոտության համար հարցաթերթի և դրա լրացման կարգի մշակում: 2. Կազմակերպությունների ընտրանքի մշակում և փորձնական հետազոտության իրականացում:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 21.3 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 21.4. Տարածման և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում: 1. Ժամանակակից կայքի մշակում և գործարկում, ինտերակտիվ վահանակների ներդրում և տվյալների տեսապատկերավորման գործիքների ինտեգրում: 2.Նոր կայքում GIS տեխնոլոգիաների, ինտերակտիվ վահանակների և ինֆոգրաֆիկների ստեղծման գործիքներ ներդրում: 3. SDMX ստանդարտի օգտագործում տվյալների փոխանակման և տարածման համար, համապատասխան գործիքների մշակում: 4.Տվյալների պաշտպանության և անվտանգության միջոցառումների իրականացում՝ միջազգային լավագույն փորձերին և GDPR սկզբունքներին համապատասխան:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 21.4 համար. Արմստատ
Անահիտ Սաֆյան Գագիկ Անանյան Արսեն Ավագյան Աիդա Մարտիրոսյան Կարինե Կույումջյան Արմինե Ավետիսյան Ալինա Գրիգորյան

Նարինե Մուշեղյան
Առաջարկություն 22 22. Մեթոդաբանական պահանջների միատեսակ կիրառումն ապահովելու համար Արմստատը պետք է ուսումնասիրի մեթոդաբանության կառավարման լավագույն կառուցվածքը և կիրառի այն ապագա վերակազմակերպման ընթացքում: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 7.2 և 10.4)
Ներկա իրավիճակը. Արմստատը չունի կենտրոնացված մեթոդաբանության գործառույթ, որը կապահովի մեթոդաբանական պահանջների միատեսակ կիրառումն ամբողջ կազմակերպությունում: Փոխարենը, այս պատասխանատվությունը կառավարվում է ապակենտրոնացված եղանակով: Սա պահանջում է, որ ապակենտրոնացված ստորաբաժանումները պահպանեն մեթոդաբանական պահանջների վերաբերյալ բարձր մակարդակի կարողություն: Գնահատող թիմը սա համարում է մարտահրավեր, քանի որ ապակենտրոնացված կառուցվածքը պահանջում է լրացուցիչ մասնագիտացված մարդկային ռեսուրսներ, որոնք արդեն իսկ սակավ են կազմակերպությունում, և կենտրոնացված գործառույթները կարող են լրացուցիչ օգուտներ բերել մասշտաբի տնտեսության միջոցով: Այս կենտրոնացումը կարող է իրականացվել տարբեր ձևերով, օրինակ՝ կենտրոնական մեթոդների ստորաբաժանման կամ աշխատանքային խմբի ստեղծման միջոցով, որը կծառայի որպես մեթոդաբանական քննարկումների կենտրոնական ֆորում: Գնահատող թիմը խրախուսում է Արմստատին քննարկել հարցը ներքին կարգով և որոշել գործողությունների լավագույն ընթացքը:
Բարելավման գործողություն 22. Մեթոդաբանական պահանջների միասնական կիրառումն ապահովելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծում, որում կընդգրկվեն վիճակագրություն արտադրող ստորաբաժանումների ներկայացուցիչները:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 22 համար. Արմստատ
Գագիկ Անանյան Մարիամ Դալլաքյան Անահիտ Սաֆյան
Առաջարկություն 23 23. Արմստատին խրախուսվում է միավորել որակի հաշվետվությունների երեք առկա կառուցվածքները մեկ միասնական, արտադրանքին հատուկ կառուցվածքի մեջ, որը կբավարարի օգտագործողների բազմազան կարիքները և որակի հաշվետվություններում կներառի որակի ցուցանիշներ: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 15.7)

Ներկա իրավիճակը. Արմստատն օգտագործողներին տրամադրում է իր վիճակագրական արտադրանքի համապարփակ փաստաթղթավորումը: Ներկայումս գոյություն ունեն որակի հաշվետվության երեք կառուցվածքներ: Արմստատի կայքում «մեթատվյալներ» մուտքագրելիս ներկայացված է 2021-2023 թվականների մեթատվյալների զարգացման ծրագիրը: «Հղում մեթատվյալներին» վերնագրի տակ ցուցադրվում է Euro SDMX մեթատվյալների կառուցվածքը (ESMS), որը ներկայացնում է Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի՝ (SIMS) օգտագործողների վրա կենտրոնացած հասկացությունները: «Որակի հաշվետվություններ» վերնագրի տակ ներկայացված է ESS որակի հաշվետվությունների կառուցվածքի ստանդարտը (ESQRS), որը ներկայացնում է SIMS-ի՝ արտադրողների վրա կենտրոնացած հասկացությունները: «Որակի հռչակագրեր» վերնագրի տակ կարելի է գտնել նաև որակի հաշվետվությունների/հղումային մեթատվյալների ավելի վաղ տարբերակը: Արմստատը ներդրել է ESS ստանդարտ SIMS-ը: Քանի որ SIMS-ը ներառում է օգտագործողների որակի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու համար անհրաժեշտ բոլոր հասկացությունները, գնահատող թիմը կարծում է, որ Արմստատի համար օգտակար կլինի կենտրոնանալ այս ստանդարտի վրա և կենտրոնանալ կայքում օգտագործողների համար նախատեսված հասկացությունների հրապարակման վրա:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 23.1 համար. Արմստատ
Բարելավման ենթագործողություն 23.2. Որակի ցուցանիշների ընդգրկման ընդլայնում որակի հաշվետվություններում:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման ենթագործողություն 23.2 համար. Արմստատ
Անահիտ Սաֆյան Ռուզաննա Շաբոյան
Առաջարկություն 24 24. Արմստատին խրախուսվում է արդիականացնել իր որակի քաղաքականությունը՝ արտացոլելու վերջին զարգացումները և լավագույն փորձը: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 4.1)
Ներկա իրավիճակը. Արմստատն ունի որակի կառավարման համակարգ, որի հիմնական բաղադրիչը որակի քաղաքականությունն է: Որակի քաղաքականությունը մշակվել է 2016 թվականին և հրապարակվել է Արմստատի կայքում, որը պարունակում է

Արմստատի առաքելության, գործառույթների և որակի սկզբունքների, ինչպես նաև Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքի սկզբունքների նկարագրությունները: Սակայն որակի քաղաքականությունը չի պարունակում վիճակագրության մեջ որակի հետ կապված պրակտիկայի և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն և, հետևաբար, կարող է օգուտ քաղել ESS-ում որակի քաղաքականության վերաբերյալ վերջերս մշակված ESS ուղեցույցներում պարունակվող առաջարկությունների և ուղեցույցների թարմացումից:
Բարելավման գործողություն 24. Որակի քաղաքականության արդիականացում՝ արտացոլելու վերջին զարգացումները և լավագույն փորձերը որակի կառավարման համակարգում: Համահունչ դարձնել Որակի քաղաքականությունը ԵՄ վիճակագրական համակարգի (ESS) որակի քաղաքականության ուղեցույցներին:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 24 համար. Արմստատ
Անահիտ Սաֆյան Ռուզաննա Շաբոյան
Առաջարկություն 25 25. Արմստատը պետք է ավելի համակարգված մոտեցում ցուցաբերի ներքին որակի վերանայումներին և ապահովի հետագա հետևողականություն: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 4.2)
Ներկա իրավիճակը. Արմստատի գործող որակի կառավարման համակարգի հիման վրա մշակվել և հրապարակվել են որակի վերանայման համակարգի տարրեր, ներառյալ 139 Արմստատ արտադրանքի որակի հռչակագրեր, GSBPM-ին համապատասխան գործընթացների նկարագրությունները և SIMS-ին համապատասխանող մեթատվյալները: Սկսվել է նաև վիճակագրական արտադրանքի ներքին որակի վերանայման գործընթաց՝ հիմնված ինքնագնահատումների, առկա որակի զեկույցների և գործընթացների նկարագրությունների վրա: Ներքին որակի վերանայումները որակի ապահովման էական տարր են: Հետևաբար, Արմստատին խրախուսվում է ընդունել որակի վերանայման ավելի համակարգված մոտեցում՝ մշակելով որակի վերանայման միասնական մեթոդաբանություն: Արմստատը պետք է նաև մշակի բոլոր վիճակագրական արտադրանքների ներքին որակի վերանայման ծրագիր հաջորդ 4-5 տարիների ընթացքում և սահմանի այդ վերանայումների մոտեցումը (օրինակ՝ նշելով, թե որ արտադրանքներն են ենթարկվում որ տեսակի վերանայման, ինչպիսիք են ինքնագնահատումը, ինքնագնահատումը՝ արտաքին փորձագետների կողմից գնահատման հետ համատեղ, և այլն): Պետք է նաև սահմանվի հետագա պլանների և բարելավման գործողությունների համակարգ:

Բարելավման գործողություն 25. Որակի վերանայումների համար միասնական մեթոդաբանության մշակում և ընդունում: Բոլոր վիճակագրական արտադրանքների համար ներքին որակի վերանայումների ծրագրի մշակում և այդ վերանայումների մոտեցման սահմանում: Հետևողական պլանների և բարելավման գործողությունների համակարգի սահմանում:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 25 համար. Արմստատ
Անահիտ Սաֆյան Ռուզաննա Շաբոյան
Առաջարկություն 26 26. Արմստատը պետք է ապահովի, որ անվանազերծված միկրոտվյալները (անհատական գրանցումները) հասանելի լինեն միայն հարցման դեպքում՝ համաձայն գիտական նպատակներով միկրոտվյալների հասանելիության ընթացակարգին, ինչպես պահանջվում է եվրոպական կանոնակարգերով: (Համապատասխանության հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշներ 5.6 և 15.4)
Ներկա իրավիճակը. Լավ պրակտիկա է հետազոտողներին հասանելիություն տրամադրել հետազոտությունների միկրոտվյալներին: Արմստատն առցանց հրապարակում է իր հետազոտությունների ամբողջական միկրոտվյալների հավաքածուները (Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություններ, Աշխատուժի հետազոտություններ, Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն) (https://armstat.am/en/?nid=15): Չնայած անձնական նույնականացուցանիշները հեռացված են, անհատները և տնային տնտեսությունները կարող են հեշտությամբ նույնականացվել երկրորդային նույնականացման միջոցով: Ցանկացած օգտագործող կարող է ներբեռնել այս ամբողջական տվյալների ժողովածուները: Արմստատը պետք է շարունակի այս տվյալների ժողովածուները հասանելի դարձնել օրինական հետազոտական նպատակների համար, բայց պետք է հասանելիություն ապահովի միայն այն բանից հետո, երբ հետազոտողները լրացնեն առցանց հարցման ձևաթուղթ, որը հիմնավորում է նախատեսված օգտագործումը և տրամադրում է օգտագործողների վերաբերյալ մանրամասները, ինչպես նաև չբացահայտման ընդունման հայտարարություն և տվյալները միայն նշված հետազոտական նպատակներով օգտագործելու պարտավորություն: Եթե Արմստատը որոշի միկրոտվյալները հրապարակայնորեն հասանելի պահել, երկրորդային նույնականացման հնարավորությունը պետք է զգալիորեն նվազեցվի, ինչը, ցավոք, նաև զգալիորեն կնվազեցնի տվյալների օգտագործելիությունը:
Բարելավման գործողություն 26. Անվանազերծված միկրոտվյալների հասանելիության տրամադրում՝ միայն հայցումների հիման վրա:

Հետազոտությունների ամբողջական անվանազերծված տվյալների հայցման ձևանմուշի մշակում՝ համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 26-րդ հոդվածի դրույթների, նախատեսված օգտագործման հիմնավորումով և օգտագործողների վերաբերյալ մանրամասների ներկայացմամբ, ինչպես նաև չբացահայտման պարտավորության ընդունման և տվյալների բացառապես նշված հետազոտական նպատակներով օգտագործման պարտավորության մասին հայտարարությամբ: Մշակված ձևանմուշի հրապարակում Արմստատի կայքում:
Վերջնաժամկետ. 2027թ. II եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 26 համար. Արմստատ
Աիդա Մարտիրոսյան Արմենուհի Առուշանյան Լուսինե Մարկոսյան
5. ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ (Առաջարկություններ 27 – 30)
Առաջարկություն 27 27. Արմստատը պետք է իր ներկայիս տարածման քաղաքականությունը բաժանի ներքին (Արմստատ) տարածման ուղեցույցների և արտաքին տարածման և հաղորդակցման քաղաքականության: Քաղաքականությունը պետք է ներառի սոցիալական մեդիայի, գործատուի բրենդինգի, վիճակագրության սխալ օգտագործմանն արձագանքելու արտակարգ իրավիճակների հաղորդակցման ծրագրի և այլնի հետ կապված բաղադրիչներ (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 15.2)
Ներկա իրավիճակը. Արմստատի ներկայիս տեղեկատվության, տարածման և հաղորդակցման քաղաքականությունը ներքին տարածման ուղեցույցների և արտաքին քաղաքականության միախառնում է: Ավելի լավ է ներքին և օգտագործողի փաստաթղթերը պահել առանձին: Ներքին տարածման ուղեցույցները պետք է վերանայվեն՝ ներառելով սոցիալական ցանցերի համար բովանդակության ստեղծումը և թարմացվեն նոր կայքի մշակումից և գործարկումից հետո: Մեկ այլ տարբերակ է՝ ներառել կազմակերպական մշակույթի և աշխատակիցների ներգրավվածության ստեղծման ընդհանուր ռազմավարություն, ինչպես նաև անձնակազմի և բաժինների կոնկրետ դերերի սահմանումը՝ պահանջվող հմտությունների հետ միասին: Չնայած ներկայիս քաղաքականությունն արդեն իսկ պարունակում է բազմաթիվ տարրեր, որոնք պետք է ունենա արտաքին հաղորդակցության քաղաքականությունը, այն կարող է ավելի ամրապնդվել՝ դառնալով ավելի նախաձեռնողական բնույթի, օրինակ՝ տարբեր օգտագործողների խմբերի և թիրախային լսարանների, ինչպես նաև նրանց հասնելու կոնկրետ ուղիների

բացահայտմամբ կամ Արմստատի բրենդավորման և պաշտոնական վիճակագրության արժեքը հաղորդելու ռազմավարություններ ներառելով: Սա պետք է ներառի սոցիալական մեդիա ռազմավարություն և ճգնաժամերի ու խնդիրների կառավարման ռազմավարություն, ներառյալ՝ երբ, ինչպես և ում կողմից արձագանքել տվյալների չարաշահմանը կամ սխալ մեկնաբանմանը կամ հրապարակված վիճակագրության մեջ առկա սխալներին: Արտաքին հաղորդակցության համար կարևոր է ունենալ համապարփակ և ինտերակտիվ շահառուների ներգրավման ծրագիր:
Բարելավման գործողություն 27. Արմստատի տեղեկատվության տարածման և հաղորդակցման քաղաքականության վերանայում՝ առանձնացնելով վիճակագրական տեղեկատվության ներքին տարածման ուղեցույցները և արտաքին տարածման ու հաղորդակցման քաղաքականությունը:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 27 համար. Արմստատ
Նարինե Մուշեղյան
Առաջարկություն 28 28. Օգտագործողների հանրային խորհուրդը պետք է մշակի միջոցներ՝ իրեն որպես պաշտոնական վիճակագրության ձայն հաստատելու, իր տեսանելիությունը բարձրացնելու և պաշտոնական վիճակագրությանը ռեսուրսների հատկացումը խթանելու հարցում ավելի նախաձեռնող լինելու համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 11.1)
Ներկա իրավիճակը. Նախորդ փորձագիտական գնահատման առաջարկությանը հետևելով՝ Օգտագործողների հանրային խորհուրդը հիմնված էր 2018 թվականի «Պաշտոնական վիճակագրության մասին» նոր օրենքի վրա: Օգտագործողների հանրային խորհրդի կազմը լավ է ներկայացնում Արմստատի օգտագործողներին, և այն, կարծես, բավականին ակտիվ է իր քննարկումներում: Չնայած դրա ազդեցությունը Հայաստանի պաշտոնական վիճակագրության վրա անկասկած դրական է, քանի որ այն լրացուցիչ շերտ է ապահովում օգտագործողների ներգրավվածության համար պլանավորման գործընթացում, թվում է, թե կա տեղ Հանրային խորհրդի տեսանելիությունը բարելավելու համար: Ակտիվ և տեսանելի Օգտագործողների հանրային խորհուրդը կարող է դառնալ ուժեղ արտաքին ձայն, որը կպաշտպանի պաշտոնական վիճակագրության արժեքը և կարևորությունն՝ այդպիսով ազդելով քաղաքականության մշակողների վրա՝ անհրաժեշտ ռեսուրսներ հատկացնելու համար: Ռազմավարական զարգացման և վիճակագրական ծրագրերի վերաբերյալ խորհրդատվության նրա պաշտոնական դերը, բնականաբար, տարածվում է այդ ծրագրերի հանրային տեսանելիության և հաջող իրականացման համար բավարար ֆինանսավորման ապահովման վրա:

Բարելավման գործողություն 28. Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի նիստերում վիճակագրական ծրագրերի ֆինանսավորման համաչափության հարցի ընդգրկում, Հանրային խորհրդի կողմից Արմստատի ֆինանսավորման հետ կապված որոշումների ընդունում և դրանց ներկայացում Ֆինանսների նախարարությանը և Կառավարությանը՝ դիրքորոշում ստանալու ակնկալիքով: Հանրային խորհրդի Աշխատակարգում համապատասխան փոփոխության ներառում և ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացում:
Վերջնաժամկետ. 2027թ. I եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 28 համար. Արմստատ. Արմստատ, Օգտագործողների հանրային խորհուրդ
Նարինե Մուշեղյան
Առաջարկություն 29 29. Արմստատը պետք է միջոցներ ձեռնարկի տարբեր օգտագործողների խմբերից պարբերաբար և համակարգված հիմունքներով մուտքագրումներ հավաքելու համար: (Բարելավման հետ կապված. Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 11.1)
Ներկա իրավիճակը. Հարցազրույց տված տարբեր օգտագործողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել վիճակագրական գործունեության նկատմամբ: Չնայած Արմստատի տարեկան վիճակագրական ծրագիրն արդեն մշակվել է օգտագործողների հետ համագործակցությամբ, պետք է խթանվի օգտագործողների և լայն հանրության ներկայացուցանիշների հետ կառուցվածքային երկխոսությունը, և տարբեր օգտագործողների խմբերից պետք է համակարգված և կանոնավոր կերպով հավաքագրվեն հատուկ մուտքային տվյալներ: Վիճակագրական որոշակի ոլորտների օգտագործողների ընտրված ներկայացուցիչների հետ շարունակական երկխոսությունը թույլ կտա Արմստատին համահունչ մնալ օգտագործողների փոփոխվող կարիքներին՝ ապահովելով, որ հավաքագրված և տարածվող տվյալները մնան արդիական: Օգտագործողների խմբերի հանդիպումները կարող են օգտագործվել հասկացությունները, գործընթացները և մեթոդաբանությունները պարզաբանելու համար՝ այդպիսով նվազեցնելով սխալ մեկնաբանությունները և բարձրացնելով օգտագործողների վստահությունը պաշտոնական վիճակագրության նկատմամբ: Չնայած Արմստատն ունի խորհրդատվական մարմիններ ստեղծելու օրենսդրորեն սահմանված իրավասություն, օգտագործողների հետ շարունակական երկխոսությունը պետք է ակտիվացվի վիճակագրական որոշակի տիրույթների վերաբերյալ կանոնավոր հանդիպումների միջոցով: Արմստատը պետք է որոշի նման օգտագործողների խմբերի/ենթահանձնաժողովների օպտիմալ կառավարման կառուցվածքը: Լավագույն փորձին հետևելով՝ դրանք կարող են

ներկայացվել կամ որպես Արմստատի խորհրդատվական մարմիններ, կամ որպես Օգտագործողների հանրային խորհրդի խորհրդատվական մարմիններ:
Բարելավման գործողություն 29. Հիմնվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 12-րդ հոդվածի վրա՝ Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումներին կից պաշտոնական վիճակագրության առանձին ոլորտների ռազմավարական և մեթոդաբանական խորհրդատվական աջակցության նպատակով խորհրդատավական միավորների կազմավորման կարգի և դրանց աշխատակարգի մշակում և ընդունում:
Վերջնաժամկետ. 2027թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 29 համար. Արմստատ
Նարինե Մուշեղյան Սարգիս Լալայան
Առաջարկություն 30 30. Արմստատին խրախուսվում է բարելավել իր հանրային հաղորդակցության պրոֆիլը՝ մշակելով ժամանակակից վիճակագրական գրագիտության նյութեր՝ ուսանողների, ուսուցիչների և տարրական և միջնակարգ դպրոցների, համալսարանների և այլ երկրների ընդհանուր օգտագործողների համար: (Բարելավման հետ կապված՝ Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագիրք, ցուցանիշ 15.2)
Ներկա իրավիճակը. Բազմաթիվ օգտագործողների խմբերի հետ քննարկումներում գնահատող թիմը նշել է պաշտոնական վիճակագրության հանրային տեսանելիության վերաբերյալ բարձրացված խնդիրները: Գնահատող թիմը նշել է, որ շատ օգտագործողներ պաշտոնական վիճակագրության հետ իրենց առաջին շփումները կապում են համալսարանական ուսման հետ: Միևնույն ժամանակ, հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը չի հիշել, որ իր նախնական կամ միջնակարգ կրթության ընթացքում առնչվել է պաշտոնական վիճակագրության հետ: Սա բաց թողնված հնարավորություն է՝ ապագա սերունդներին ծանոթացնելու պաշտոնական վիճակագրության դերի և արժեքի հետ, ինչը նաև կբարձրացնի Արմստատի տեսանելիությունը՝ թե՛ որպես վստահելի հանրային տեղեկատվության աղբյուր, թե՛ որպես երիտասարդ մասնագետների համար կարիերայի հնարավոր ուղղություն: Գնահատող թիմը նաև նշել է, որ շահառուների հետ ավելի լայն քննարկումների միջոցով, կառավարության մարմինների նկատմամբ ընդհանուր վստահությունը կարող է բարելավվել: Պաշտոնական վիճակագրության և երիտասարդների, մանկավարժների և լայն հանրության միջև կապի ամրապնդումը կարող է օգնել հակազդել դրան՝ ցույց տալով, թե ինչպես կարող է վիճակագրությունը ծառայել որպես չեզոք, փաստացի հիմք՝ տնտեսական և սոցիալական իրականությունները հասկանալու համար: Արմստատի և դրա դերի թափանցիկ, տվյալների վրա

հիմնված որոշումների կայացման գործում հանրային իրազեկության բարձրացումը կարևոր է երկարաժամկետ վստահություն հաստատելու համար: Հաշվի առնելով այս դիտարկումները՝ գնահատող թիմը գիտակցում է, որ Արմստատը պետք է մշակի ժամանակակից վիճակագրական գրագիտության նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն ուսանողներին, ուսուցիչներին և լայն հանրությանը: Այս ջանքերը կարող են լինել կրթական նյութերի, ինտերակտիվ վեբ բովանդակության, դպրոցների և համալսարանների հետ գործընկերության և իրազեկման արշավների տեսքով: Նման նախաձեռնությունները կբարձրացնեն պաշտոնական վիճակագրության տեսանելիությունը և ընկալվող արդիականությունը՝ նպաստելով Արմստատի նկատմամբ վիճակագրական գրագիտության և վստահության բարելավմանը:
Բարելավման գործողություն 30. Ժամանակակից վիճակագրական գրագիտության նյութերի մշակում տարրական և միջնակարգ դպրոցներում, համալսարաններում սովորողների, ուսուցիչների և ընդհանուր օգտագործողների և այլ շրջանակների համար՝ Արմստատի հանրային հաղորդակցության կարողությունները բարելավելու նպատակով:
Վերջնաժամկետ. 2028թ. IV եռամսյակ
Պատասխանատու հաստատություն Բարելավման գործողություն 30 համար. Արմստատ
Նարինե Մուշեղյան